# Մասիս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

43ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 27 (2037) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 15, 2023
VOLUME 43, NO. 27 (2037) SATURDAY JULY 15, 2023

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## Վարդան Օսկանեանի Բանակցող Դառնալու Յաւակնութիւնները

Նախկին արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան վերջին օրերուն հանդէս կու գայ յայտարարութիւններով, առաջարկելով որպէսզի իրեն տրուի լիազօրութիւն՝ Ատրպէյճանի եւ միջազգային կառոյցներու հետ Հայաստանի անունով բանակցութիւններ վարելու՝ խոստանալով բեկում մտցնել գործընթացքին մէջ:

«Առաջին պայման. որ լիազօրութիւն տրուի մի խումբ դիւանագէտների, եւ ես պատասխանատուութիւն վերցնում եմ այնտեղ կտրուկ՝ երկու-երեք ամսուայ ընթացքին իրավիճակ փոխելու, բայց այդ երկու-երեք ամսուայ ընթացքին Փաշինեանը ուղղակի պէտք է լռի, չխօսի», - ըսած է Վարդան Օսկանեան:

Այս պարզամիտ առաջարկութեան անդրադարձան ընկերային ցանցերու բազմաթիւ օգտատէրեր, ինչպէս նաեւ քաղաքական մեկնաբաններ՝ առաջին հերթին յիշեցնելով Օսկանեանի անցեալի դիւանագիտական բազմաթիւ ձախողումները՝ որոնք նպաստեցին Ատրպէյճանի դիրքերու կարծրացման եւ Հայաստանը հասցուցին ներկայ բանակցային կացութեան:

Օսկանեան առիթով մը ազատագրուած տարածքները կոչած էր «օքուբացուած», Քոչարեանի հետ պատրաստ էր Մեղրին յանձնել Ատրպէյճանին, բանակցած էր ընդհանուր պետութիւն ստեղծելու գաղափարին շուրջ, ընդունած էր Մատրիտեան սկզբունքները, որոնք Ատրպէյճանին կու տային վեթոյի իրաւունք՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցով, այդպիսով իսկ Արցախը զրկելով ինքնավարութիւն ձեռք ձգելու իրաւունքէն:

Այս բոլորի շուրջ բանակցած ու համաձայնութիւն տուած նախկին նախարարը կը պահանջէ լիազօրութիւն՝ իբրեւ թէ աւելի Յայանպաստ որոշումներ ապահովելու համար, երբ անցեալի իր ցուցանիշները այդքան ալ փայլուն չեն եղած:

«Արցախի ինքնավար մարզ լինելը բանակցութիւններում ամրագրելը հնարաւորութիւն կտայ աւելի հայանպաստ լուծում գտնել», կ'ըսէ Օսկանեան, մոռնալով որ իր եւ Քոչարեանի «դիւանագիտութեան» շնորհիւ Լեռնային Ղարաբաղը դուրս ձգուեցաւ բանակցութիւններէն՝ այդպիսով ամենէն մեծ հարուածը հասցնելով Արցախահայու-

Շար.ը էջ 5

## ԼՂ-ի Մէջ ՀՀ Բանակ Չկայ. ԼՂ-ի Մէջ Կը Գործէ ԼՂ Պաշտպանութեան Բանակը, Որուն Գոյութեան Պատճառները Ատրպէյճանի Ամէնօրեայ Գործողութիւններուն Մէջ Են. Փաշինեան

*«Լաչինի միջանցքի շրջափակման հետեւանքով ԼՂ-ում մարդասիրական ճգնաժամը օր-օրի սրւում է», կառավարութեան հերթական նիստին ընթացքին յայտնեց վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ աւելցուց, որ Հաքարի կամուրջին մօտ տեղի ունեցած սադրանքէն յետոյ ԼՂ-ն զրկուած է բոլոր տեսակի ապրանքներու մատակարարումներէն, եւ մատակարարումներ իրականացնելու հնարաւորութիւն չունին նոյնիսկ ռուս խաղաղապահները:*

*Անդրադառնալով ատրպէյճանական հռետորաբանութեան եւ քարոզչութեան շարունակական սրման՝ Նիկոլ Փաշինեան ընդգծեց. «Չեն դադարում ՀՀ-ի հասցէին հնչող ատրպէյճանական անհիմն մեղադրանքները: Ատրպէյճանը շարունակում է Հայաստանից պահանջել ԼՂ-ից դուրս բերել Հայաստանի բանակի ստորաբաժանումները՝ այն պարագայում, երբ ՀՀ-ն Լեռնային Ղարաբաղում զինուոր չունի: Արձանագրում եմ եւս մէկ անգամ՝ ԼՂ-ում Հայաստանի Հանրապետութեան բանակ չկայ, ԼՂ-ում գործում է ԼՂ պաշտպանութեան բանակը, որի գոյութեան պատճառները իւրաքանչիւր օք ամէն օր կարող է գտնել Ատրպէյճանի պաշտօնական քարոզչութեան եւ գործողութիւնների մէջ»:*



Արցախի պաշտպանութեան բանակի միաւորները

*Ատրպէյճանի գործողութիւններուն անթաքոյց էութիւնը ԼՂ հայերը ցեղային զտման եւ ցեղասպանութեան ենթարկելն է, յայտնեց վարչապետ Նիկոլ Փաշինեան:*

*«Ցեղային զտման ատրպէյճանական այդ քաղաքականութեան*

Շար.ը էջ 6

## ՍԴՀԿ Ներկայացուցիչներու Հանդիպումը Վարչապետ Նիկոլ Փաշինեանի Հետ



ՍԴՀԿ պատուիրակութեան հանդիպումը Հայաստանի վարչապետին հետ

*Յուլիս 7-ին Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչները՝ Կեդրոնական Վարչութեան ատենապետ Համբիկ Սարաֆեանի գլխաւորութեամբ:*

*Վարչապետը կարեւորած է ՀՀ կառավարութեան եւ ՍԴՀԿ-ի միջեւ համագործակցութիւնը եւ ընդգծած է կուսակցութեան ներգրաւուածութիւնը՝ արտախորհրդարանական քաղաքական ուժերուն հետ համագործակցութեան խորհրդակցական ժողովին:*

*Նիկոլ Փաշինեան շեշտած է ՍԴՀԿ-ի դերը Սփիւռքի համայնքներուն մէջ եւ այս առումով կարեւորած է նման հանդիպումներու միջոցով մեր հայրենակիցներուն անհրաժեշտ տեղեկատուութեան փոխանցումը:*

*Համբիկ Սարաֆեանը ՍԴՀԿ-ի աջակցութիւնը յայտնած է կառավարութեան՝ երկրին առջեւ ծառացած մարտահրաւէրներու յաղթահարման գործին մէջ:*

*Զրուցակիցները քննարկած են առկայ խնդիրների լուծման ու այդ ուղղութեամբ իրականացուող քայլերուն վերաբերող հարցեր:*

## Կեանքէն Հեռացած Է Փրոֆեսոր Ռիչըրտ Յովհաննէսեանը



*Յուլիս 10-ին, Լոս Անճելըսի մէջ 90 տարեկան հասակին կեանքէն հեռացած է աշխարհահռչակ գիտնական, Հայաստանի Ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Գալիֆորնիոյ պետական համալսարանի Արդի հայոց պատմութեան ամպիոնի հիմնադիր ու առաջին վարիչ, «Հայաստանի Հանրապետութիւն» կոթողային քառահատոր աշխատութեան եւ Հայոց Ցեղասպանութեան ու պատմական հայրենիքի վերաբերեալ բազմաթիւ գիրքերու հեղինակ Ռիչըրտ Գ. Յովհաննէսեանը:*

*Ան Հայրն է «Ժառանգութիւն» կուսակցութեան հիմնադիր Րաֆֆի Յովհաննէսեանի:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Մարտի 1-Ից Մինչեւ Չկատարուած Խոստումներ... Սերժ Սարգսեանի 10 Տարիները

ԴԱՒԻԹ ԼԵՒՈՆԵԱՆ

*Civic.am-ի փէյսպուքեան հարթակում Սերժ Սարգսեանի աջակիցները՝ հիմնականում փէյք էջերի միջոցով, նիւթի մեկնաբանութիւններում մերժուած նախագահին ներկայացրել էին որպէս նուիրեալ ղեկավար եւ հերոս, ով երբեք չի ստել: Հիմա մի փոքր թարմացնենք նրանց յիշողութիւնը: Արդեօ՞ք հերոս է այն ղեկավարը, ով իշխանութեան է գալիս Մարտի 1-ով, այսինքն՝ Քոչարեանի, ուժայինների, օլիգարխների եւ կրիմինալի օգնութեամբ: Իսկ յետոյ այդ ուժայիններին դարձնում է օլիգարխներ, իսկ օլիգարխներին ու կրիմինալին՝ օրէնսդիրներ:*

*Նախագահութեան տասը տարիներին Սերժ Սարգսեանը շռայլ էր ոչ միայն կուսակիցների ու հարազատների հանդէպ, այլեւ իր իսկ խոստումներում: Նա խոստացել էր յաղթահարել Գիւմրիում երկրաշարժի բոլոր հետեւանքները, լինել դէպի Ստեփանակերտ ուղեւորուող ինքնաթիռի առաջին ուղեւորը, կառուցել Հայաստան-Իրան երկաթուղի, նոր ատոմակայն եւ այլն... այս խոստումներից ոչ-մէկ չի կատարել:*

*Մինչդեռ 2008թ.-ին Սարգսեանը վստահեցնում էր, որ յուսախաբ չի անի. - «Ինձ չեն կարող քննադատել նրա համար, որ ես երբեւէ ինչ-որ բան խոստացել եմ եւ այդ խոստումը մնացել է օդում»:*

*Հիմա Սարգսեանը ժողովրդին խաբե՞լ է, թէ՞ ոչ: Երրորդ Նախագահի ղեկավարութեան տարիներին կոռուպցիան ու մենաշնորհները տնտեսութեան անբաժանելի մասն էին կազմել: Կային իշխանութեան հովանաւորութիւնից օգտուող առանձին խմբեր, պիզնեսմեններ, ովքեր իրենց յաջողութիւններին հասել են միայն այդ հովանաւորչութեան արդիւնքում: Իսկ եթէ կը լինէին բարեխիղճ գործարարներ, որոնք չէին ցանկանայ «մուծուել», նրանց պիզնեսները կը փակուէին: Տնտեսութեան անհեռատես քաղաքականութեան արդիւնքում երկրում աճում էր աղքատութեան ու գործազրկութեան մակարդակը:*

*Սա հանգեցրեց նրան, որ Սարգսեանի նախագահութեան 10 տարիներին Հայաստանից արտագաղթեց աւելի քան 380.000 մարդ, իսկ մշտական բնակչութիւնը նուազեց 260.000-ով: Սրանից լաւ ցուցիչ, թէ որքանով էր արդիւնաւէտ Սերժ Սարգսեանի կառավարումը չի կարող լինել:*

*Ինչ վերաբերւում է արցախեան հարցին, ապա երբ Սարգսեանի կուսակիցներն ու աջակիցները հպարտօրէն պնդում են, թէ նրա ղեկավարած տարիներին Արցախն անկախ էր, ակամայից յիշում ենք հենց Սարգսեանի խօսքը. «Ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը նշանակում է պատերազմ յայտարարել Ատրպէյճանին, որովհետեւ, եթէ դու ճանաչում ես Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը այլեւս ինչ բանակցութիւններ, իսկ բանակցութիւնների այլընտրանքը պատերազմն է»:*

*«CIVIC.AM9*

# Հարցման Որոշ Տուեալներ Լաւատեսութիւն Են Ներշնչում

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

*«GALLUP International Association»-ը ներկայացնող հայկական MPG ընկերութիւնը հրապարակել է Յունիսին անցկացուած հերթական հեռախօսային հարցման արդիւնքները:*

*Նախ՝ ընդհանուր նկատառում յայտնեմ նման հարցումների վերաբերեալ: Այն մարդիկ, ում այդ հարցումների արդիւնքները դուր չեն գալիս, մշտապէս բացականչում են՝ «չենք հաւատում, սաղ սուտ է, բոլոր թուերը նկարած են»: Բայց պէտք է հասկանալ, թէ ինչի մասին կարող են վկայել այդ արդիւնքները:*

*Հասարակական գիտութիւններում հնարաւոր չէ խօսել գծային, միագիծ գործընթացների մասին՝ մենք գործ ունենք մարդկանց եւ մարդկանց խմբերի հետ, որոնց վարքը շատ դէպքերում անկանխատեսելի է եւ ոչ ռացիոնալ: Այստեղ կարելի է խօսել միայն հնարաւոր սցենարների մասին: Այսինքն, եթէ, օրինակ, նախագահական ընտրութիւններից առաջ հարցման համաձայն ստացւում է, որ մէկը 80 տոկոս ձայն է հաւաքում, իսկ միւսը՝ 20, դա չի նշանակում, որ կանխատեսւում է ընտրութիւնների հենց այսպիսի արդիւնք: Դա ընդամէնը նշանակում է, որ մէկի յաջողութեան հաւանականութիւնը 80 է, իսկ միւսինը՝ 20:*

*Այդ վերապահումներով հանդերձ, հետաքրքիր է նախեւառաջ դիտարկել ոչ այնքան բացարձակ թուերը, որքան դինամիկան, մարդկանց տեսակէտների փոփոխութիւնը որոշակի ժամանակահատուածի ընթացքում, տուեալ դէպքում՝ Յունուարից Յունիս: Այդ առումով ուշագրաւ են երկու հարցերի պատասխանները:*

*Ովքե՞ր են մեղաւոր Արցախում ստեղծուած իրավիճակի համար: Ցիշեալ ամիսների ընթացքում խիստ նուազել են Ատրպէյճանի, Ռուսաստանի եւ Թուրքիայի տոկոսները եւ 29 տոկոսից 35 տոկոս աճել է այն քաղաքացիների թիւը, որոնք կարծում են, որ մեղաւոր են Հայաստանի իշխանութիւնները: Ո՞ր երկրից կարելի է ռազմաքաղաքական օգնութիւն ստանալ Ատրպէյճանի ագրեսիայի դէպքում: Դարձեալ՝ բոլոր հնարաւոր երկրներից ակնկալիքները ճապէս պակասել են, իսկ յարաբերական մեծամասնութիւնը (35,8 տոկոսը) պնդում է, որ «նման երկիր չկայ»: Յունուարին այդ տոկոսը կազմում էր 8.7:*

*Հարցումը ցոյց է տալիս, որ մեր քաղաքացիների ճնշող մեծամասութիւնը միանշանակ դէմ է Հայաստանի դրօշը, զինանշանը եւ օրհներգը փոխելուն: Կէսից աւելին՝ 56 տոկոսը, ընդհանրապէս չի վստահում 44-օրեայ պատերազմի հանգամանքները քննող ԱԺ յանձնաժողովում Փաշինեանի ելոյթներին: Եթէ այդ տուեալները ճիշտ են, ապա դրանք որոշակի լաւատեսութիւն են ներշնչում:*

*Ինչ մնում է Երեւանի աւագանու ընտրութիւններին, ապա այստեղ դեռեւս յստակութիւն չկայ: Իշխանութեան թեկնածու Տիգրան Աւինեանը եւ նախկին քաղաքապետ Հայկ Մարութեանը մօտիկ արդիւնքներ են ցոյց տալիս՝ համապատասխանաբար 10.1 եւ 8.2 տոկոս: Սակայն Մարութեանը դեռեւս չի յայտարարել իր մասնակցութեան մասին: Իսկ եթէ յայտարարի, ապա ո՞ր ճամբարից է խաղալու, նոյնպէս պարզ չէ:*

*«ԱՌԱՒՕՏ»*

# Ինչ Է Կատարւում Ռուսաստանում. «Զոհասեղանին» Դրուած Գլուխները

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

*Կրեմլը հաստատել է տեղեկութիւնը, որ «ակնթարթային ապստամբութիւնից» հինգ օր անց ՌԴ նախագահ Փութինը Կրեմլում հանդիպել է «Վագներ» մասնաւոր ռազմական կազմակերպութեան հրամանատարների եւ ղեկավարի՝ Պրիգոժինի հետ: Ըստ Կրեմլի խօսնակ Պեսկովի, Փութինը ներկայացրել է վագներականներին, թէ ինչպէս է տեսնում նրանց յետագայ գործունէութիւնը, իսկ վագներականներն էլ հաւաստել են, որ հաւատարիմ են գերագոյն գլխաւոր հրամանատարին: Այդ ամէնն իհարկէ կը լինէր կատակերգական ֆիլմի հիանալի սցենար, եթէ խօսքը չվերաբերէր ընդհուպ աշխարհի համար բախտորոշ մի շրջափուլում միջուկային գերտէրութեան ներիշխանական իրողութիւններին, որոնք անկասկած ազդեցութիւն ունեն հենց միջազգային մասշտաբով:*

*Պրիգոժինի «ապստամբութիւնը» Փութինը որակեց դաւաճանութիւն եւ հարուած թիկունքից, բայց հինգ օր անց փաստօրէն «դաւաճանների» հետ քննարկում է նրանց յետագայ գործունէութիւնը: Այսօր թերեւս որեւէ մէկի մօտ չկայ կասկած, որ տեղի ունեցածը բաւականին հանգամանալից մշակուած սցենար էր, որտեղ իհարկէ վագներականներն ու նրանց ղեկավար Պրիգոժինն էլ նոյնիսկ չգիտէր, թէ ինչ դեր է կատարում եւ ինչով է այն աւարտուելու: Ով գիտէր, ովքե՞ր էին սցենարի հեղինակները, պարզ չէ, սակայն ըստ ամենայնի խօսքը ՌԴ նախագահի եւ նրան յարող շատ փոքր շրջանակի մասին է, որում չկան նոյնիսկ պաշտպանութեան նախարար Շոյգուն եւ ԳՇ պետ Գերասիմովը: Սրանք կարեւոր դետալներ են, որոնք թերեւս ՌԴ ներիշխանական իրողութիւնների գնահատման հարցում կարեւոր եւ օգտակար, թէեւ իհարկէ ոչ բաւարար ցուցիչներ են: Սակայն, դրանք վկայում են, որ ՌԴ վերնախաւում տեղի է ունենում ստատուս-քուոյի փոփոխութիւն, որն իհարկէ չի լինի ակնթարթային պրոցես, սակայն անկասկած խորքային է ու մասշտաբային, եթէ խաղարկւում է «ապստամբութեան» գործիքակազմով եւ «սեղանին» դէ ֆակտո դրւում են պաշտպանութեան նախարարի եւ ԳՇ պետի «գլուխները»: Խօսքն իհարկէ զոհաբերութեան մասին չէ, այլ պարզապէս «խաղադրոյքի»: Կասկածից վեր է, որ կան նաեւ այլ «գլուխներ», որոնք պարզապէս հրապարակայնօրէն «մատուցուած» չեն, քանի որ հրապարակայինները ինքնին չափազանց խօսուն են:*

*Ռուսաստանի վերնախաւում տեղի ունեցող այդ գործընթացը անշուշտ իր ոչ թէ զուտ ազդեցութիւն, այլ թերեւս նոյնիսկ դրսեւորումն է ունենալու Հայաստանում եւ Արցախում: Անկասկած է, որ դա ենթադրելու է նաեւ «գլուխներ» Հայաստանում, առնուազն Ռուսաստանի ներիշխանական համակարգային իրողութիւններից «ածանցուած» տարբերակով: Ընդորում, թերեւս նաեւ այդ տիրոյթում է պէտք դիտարկել Արցախի նախագահի՝ Փութինին յղուած նամակի մասին տեղեկատուութեան հանրայնացումը: Միաժամանակ, ինչպէս Ռուսաստանում, այնպէս էլ Հայաստանում՝ գործընթացը չի ունենալու արագ ընթացք եւ չի լինելու կարճատեւ, սակայն միեւնոյն ժամանակ այն Հայաստանում էլ չի սահմանափակուի լոկ «ներքին շրջանակով» եւ ունենալու է նոյնքան «միջազգային» ազդեցութեան եւ ըստ այդմ նաեւ՝ թէ ներգրաւուածութեան, թէ հակազդեցութեան մասշտաբ, որքան անմիջականօրէն Ռուսաստանում տեղի ունեցողը:*

*«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»*


Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**


Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր տեսակէտները

## ԼՈՒՐԵՐ

# Հայաստան Այցելող Զբօսաշրջիկներու Թիւը Այս Տարի Կրնայ Հասնիլ 2 Միլիոնի




Մամլոյ ասուլիսի ընթացքին ելոյթ կ՚ունենան Զբօսաշրջութեան Կոմիտէի Ներկայացուցիչները

Հայաստան ընթացիկ տարուայ առաջին կիսամեակին արդէն այցելած է 1 միլիոն զբօսաշրջիկ: Այս ցուցանիշը 30 տոկոսով աւելին է նախաքովիտեան ժամանակաշրջանի՝ 2019 թուականի առաջին կիսամեակին համեմատ: Հայաստան ամենաշատ այցելութիւնները եղած են Ռուսաստանէն՝ 52 տոկոս, Վրաստանէն՝ 11 տոկոս, Իրանէն՝ 6 տոկոս: ՀՀ Էկոնոմիկայի Նախարարութեան Զբօսաշրջութեան Կոմիտէի Նախագահ Սիսիան Պօղոսեան նշեց, որ այս ցուցանիշը տարբեր ուղղութիւններով տարուող աշխատանքի արդիւնք է: Հայաստանը աշխոյժ մասնակցութիւն կ՚ունենայ միջազգային զբօսաշրջային ցուցահանդէսին, Զբօսաշրջութեան Կոմիտէն կ՚աշխատի օդանաւային ընկերութիւններուն հետ, կը կազմակերպէ լրագրողներու, պլոկըրներու այցեր Հայաստան, միջազգային մետիա հարթակներու վրայ, ընկերային ցանցերու մէջ կ՚ապահովէ Հայաստանի մասին պատմող նիւթերով:

«Մենք աշխատում ենք ամենատարբեր ուղղութիւններով: Մեր ուշադրութեան առանցքում են եւրոպական, արաբական երկրները: Աշխոյժ աշխատում ենք Իտալիայի, Ֆրանսայի հետ: Յառաջիկայում մասնակցելու ենք Ֆրանսայում կայանալիք միջազգային ցուցահանդէսին: Հիմա գտնւում ենք զբօսաշրջիկային եղանակի աշխոյժ փուլում, այցելութիւնների աշխուժութիւնը այսպէս պահպանուելու դէպքում ակնկալում ենք, որ տարուայ վերջին 2 միլիոն այցելութիւն կ՚ունենանք», ըսաւ Սիսիան Պօղոսեանը:

Որոշ եւրոպական երկիրներ Հայաստանը չեն դիտարկեր անվտանգ երկիր եւ խորհուրդ չեն տար իրենց քաղաքացիներուն այցելութիւն կազմակերպել այդ ուղղութեամբ: Ի՞նչ քայլեր կը ձեռնարկուին Հայաստանի համապատասխան կառոյցներու կողմէ: Սիսիան Պօղոսեանը տեղեկացուց, որ Արտաքին Գործերու Նախարարութեան հետ կ՚աշխատին այդ ուղղութեամբ, հանդիպումներ կ՚ունենան նաեւ դեսպանութիւններու հետ:

«Արդէն կամաց-կամաց փոփոխութիւններ տեսնում ենք, օրպէս օրինակ՝ ներկայացնեմ Գերմանիան: Իրենց կայքում արդէն փոխել են մօտեցումը, բայց դեռ ունենք այլ եւրոպական երկրներ, որտեղ այդ խնդիրը կայ եւ աշխատում ենք այդ ուղղութեամբ», յաւելեց Սիսիան Պօղոսեանը:

# Թագուհի Թովմասեանի Լիազօրութիւնները Դադրեցուեցան՝ Որպէս Խորհրդարանի Յանձնաժողովի Նախագահ

62 կողմ եւ 1 դէմ ձայներու յարաբերակցութեամբ, փակ-գաղտնի քուէարկութեամբ, իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութիւնը զրկեց ընդդիմադիր պատգամաւոր Թագուհի Թովմասեանը խորհրդարանի Մարդու Իրաւունքներու Պաշտպանութեան Յանձնաժողովի Նախագահի պաշտօնէն:

Հիմնական զեկուցող Ցովիկ Աղազարեան ելոյթ ունեցաւ՝ ներկայացնելով իշխանութեան հիմնաւորումները: Անոր ոեւէ պատգամաւոր հարց չտուաւ, ելոյթ չունեցաւ, եզրափակիչ ելոյթի կարիք ալ չառաջացաւ:

Աղազարեան միայն նշեց, որ ընդդիմադիր պատգամաւոր Թագուհի Թովմասեանը չէ մասնակցած Ազգային Ժողովի Խորհուրդի նիստերուն՝ 46 նիստերէն բաց թողելով 38-ը, ինչ որ բացասաբար ազդած է յանձնաժողովի աշխատանքներուն վրայ:

Իշխանութեան հիմնաւորմամբ, Թովմասեան նաեւ անտարբերութիւն դրսեւորած է եւ չէ պաշտպանած մարդու արժանապատուութիւնը ոտնահարող եւ վիրաւորանք պարունակող յայտարարութիւններէն:



Պատգամաւոր Թագուհի Թովմասեան

# Պիտի Ստեղծուի Ոստիկաններու Եւ Փաստաբաններու Յանձնախումբ՝ Արձագանգելու Ոստիկաններու Բռնութիւններուն

Ընդդէմ ոստիկանական բռնութիւններու արդէն երկրորդ անգամ գործադուլ յայտարարած փաստաբանները ընդունեց Ներքին Գործերու Նախարար Վահէ Ղազարեանը:

Փաստաբանական պալատէն ոստիկանութեան կեդրոնական շէնքին մօտ քայլերթով հասած փաստաբաններուն հետ աւելի քան կէս ժամ տեւած հանդիպումէն յետոյ որոշուեցաւ յուշագիր ստորագրել: Փաստաբան Արա Զոհրապեան մանրամասնեց, որ յուշագրով պիտի ստեղծուի ոստիկաններէ ու փաստաբաններէ կազմուած յանձնախումբ՝ արձագանգելու ոստիկաններու բռնութիւններուն:

«Այսուհետ նման դէպքերը փաստաբանների հետ կապուած, չի լինի նման դէպք, մենք ամէն ինչ կ՚անենք, որ նման դէպքեր այլեւս չկրկնուեն, ու տարբեր հաւաստիացումներ եղան, նաեւ այդ յանձնախմբի ձեւաւորման գաղափարն էլ, որը քննարկուեց, դրա հետ կապուած, որ նման դէպքեր լինելու դէպքում փաստաբանները արագ կը զանգեն այդ յանձնախմբին, որի մէջ կը լինեն երեք փաստաբան, երեք ոստիկան», ըսաւ ան:

Տեւական ժամանակէ փաստաբանները կ՚ահազանգեն ոստիկանական բաժանմունքներուն մէջ իրենց պաշտպանեալներու եւ փաստաբաններու նկատմամբ բռնութիւններու մասին: Առաջին միջադէպը Փետրուարին էր Էրեբունիի ոստիկանական բաժնին մէջ՝ ոստիկանները ծեծած էին փաստաբաններ Մարգպետ Աւագեանն ու Էմանուէլ Անանեանը ու անոնց՝ անչափահաս պաշտպանեալները: Երկրորդ դէպքը մէկ ամիս առաջ էր՝ Կեդրոնի բաժնին մէջ բռնութեան ենթարկուած էր փաստաբան Կարէն Ալավերտեանն ու անոր պաշտպանեալը: Այս երկու դէպքերով քրէական գործ յարուցուած էր: Կարէն Ալավերտեան տեղեկացուց, որ իր պաշտպանեալը խոշտանգելու գործով երկու ոստիկանի նկատմամբ քրէական հետապնդում յարուցուած է, կասեցուած է անոնց պաշտօնավարումը: Գործը կը քննէ Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը:

# ՄԻԵԴ-ի Մէջ Պարտութեան Պատճառ Դարձած Վեց Դատաւորներ Հեռացուած Են




Մարդու Իրաւունքներու Եւրոպական Դատարանին (ՄԻԵԴ) մէջ Հայաստանի պարտութեան պատճառ դարձած վեց դատաւոր անցեալ մէկ տարուան մէջ հեռացուած են աշխատանքէն: Ընդ որում, վեցէն չորսին լիազօրութիւնները դադրեցուած են երկու օր առաջ: Անոնց շարքին, սակայն, տակաւին չկան աղմկահարոյց գործեր քննած դատաւորները, օրինակ՝ 2008-ի Մարտ 1-ի գործերով ընդդիմադիրներու դէմ վճիռներ կայացնողները:

«Կարող եմ որպէս կողքից մարդ մտածել, որ օրինակ՝ դատաւորներին պահում են, որ յետոյ իրենք օգտագործեն: Սկսում ես մտածել, որ ուրեմն էլի ինչ-որ բան կայ, օրինակ՝ Վճռաբեկ Դատարանում երկու դատաւորի տեղ էր պէտք ազատել, գնացել են այս ճանապարհով», «Ազատութեան» հետ զրոյցին ընթացքին ըսաւ Հայ Ազգային Գոնկրէսի իրաւական հարցերով պատասխանատու Արմէն Խաչատրեանը:

Միայն Երեւանի կեդրոնը քաղաքացիները տուներէ զրկելու գործերէն մէկով Եւրոպական դատարանը Հայաստանին պարտաւորեցուցած է վճարել աւելի քան մէկուկէս միլիոն եւրոյի փոխհատուցում, իսկ Մարտ 1-ի արիւնալի դէպքերուն առնչուող գործերով՝ աւելի քան 130 հազար եւրօ: Այդուհանդերձ, այս գործերը քննած դատաւորները կը շարունակեն պաշտօնավարել: Անոնց շարքին է նաեւ տարիներ առաջ վարչապետ Փաշինեանը դատած դատաւոր Մնացական Մարտիրոսեանը, որ այս տարեսկիզբին դարձաւ Երեւանի Ընդհանուր Իրաւասութեան Քրէական Դատարանի ղեկավար: Մինչդեռ Եւրոպական Դատարանը արձանագրած էր, որ Մարտիրոսեանի դատավճիռով խախտուած են նախկին ընդդիմադիր Փաշինեանի իրաւունքները:

«Մարդու Իրաւունքների Եւրոպական Դատարանի որոշումներով հաստատուած քաղաքացիների իրաւունքների կոպիտ խախտումներով դատավճիռների հեղինակ բոլոր դատաւորները պէտք է հրաժարական տան, հեռանան կամ հեռացուեն պաշտօններից», յայտնած էր վարչապետ Փաշինեան:

Մարդու Իրաւունքներու Եւրոպական Դատարանը մինչեւ 2021 թուականը Հայաստանի դէմ կայացուցած է 130-է աւելի վճիռ, վերջին երկու տարիներուն տուեալները դեռ առկայ չեն:

Արդարադատութեան նախարարի խորհրդական Արտեմ Սուճեանը կը վստահեցնէ, որ պիտի ուսումնասիրեն բոլոր գործերը անխտիր. «Ուսումնասիրութիւն կ՚անենք այն արագութեամբ, այն ձեւաչափով, որ յանկարծ այնպիսի գործ չլինի՝ բաց թողնենք ժամկէտն անցնելու պատճառաբանութեամբ»:

Ըստ նախորդ տարի կատարուած փոփոխութեան՝ կառավարութիւնը հնարաւորութիւն ունի մինչեւ 15 տարի առաջ կայացուած վճիռներու հիմքով դատաւորներու լիազօրութիւնները դադրեցնելու միջնորդութիւն ներկայացնել: Ըստ Արդարադատութեան Նախարարութեան ներկայացուցիչին՝ ուսումնասիրութիւնը սկսած են Եւրոդատարանի վերջին վճիռներէն, բայց պաշտօնեան կը վստահեցնէ, որ ամէն ինչ պիտի ընեն, որ 2008-ի Մարտ 1-ի դէպքերուն առնչուող վճիռներու ժամկէտերը չանցնին:

## ԼՈՒՐԵՐ

# Մեզի Աւելի Շատ Ջանքեր Պէտք Են Ցեղային Զտումները Կանխելու Համար. Միրզոյեան



Նախարար Միրզոյեան կը մասնակցի Տուպրովնիքի համաժողովին

Երեւանը բարեխիղճ բանակցութիւններ կը վարէ, բայց բանակցային գործընթացին մէջ եւ գետնի վրայ դեռ կը բախի սպառնալիքներու, ուժի իրական կիրառման, Տուպրովնիքի համաժողովի շրջանակներուն մէջ ըսած է Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը:

«Մենք այստեղ խօսում ենք մարդկային կեանքերի մասին, եւ ես յոյս ունեմ որ քաղաքականութեան նպատակը մարդկանց կեանքը բարելաւելն է: Ունենք Լեռնային Ղարաբաղի շրջափակում: Մեզ աւելի շատ միջազգային ջանքեր են պէտք ցեղային զտումները կանխելու համար: Ղարաբաղում ցեղային զտումը կանխելու յոյս դեռ կայ, մենք փորձում ենք լուծումներ գտնել, բայց բանակցութիւնները շատ խճճուած են», յայտնած է ան:

Արարատ Միրզոյեան շեշտած է, որ Լեռնային Ղարաբաղի հայերու իրաւունքներու եւ անվտանգութեան խնդիրը նաեւ բոլորին է. «Մարդիկ Լեռնային Ղարաբաղում կանգնած են ցեղային զտման, իրական ցեղասպանութեան սպառնալիքի առջեւ: Եթէ սա խնդիր չէ, ի՞նչ կարող եմ ասել… եթէ մենք խօսում ենք միջազգային կարգի մասին, ու որի մասին երազում ենք, ու որը հիմնուած է արժէքների վրայ, ուրեմն մարդկութիւնը դեռ հնարաւորութիւն ունի: Եթէ այն միայն ազգային շահերի մասին է, ուրեմն կը ներէք … »:

Արտաքին գործերու նախարարը յիշեցուցած է, որ Ատրպէյճանը ղարաբաղեան երկրորդ պատերազմէն յետոյ քանի մը անգամ ներխուժած է Հայաստանի ինքնիշխան տարածք:

Սա նոյնիսկ շրջափակում չէ, սա Լեռնային Ղարաբաղի պաշարում է, յաւելած է Հայաստանի արտաքին գործերու նախարարը՝ յիշեցնելով, որ բաւականին երկար ժամանակ է սնունդ եւ դեղորայք չի մատակարարուիր Լեռնային Ղարաբաղ:

«Մարդիկ պաշարուած են: Եւ սա խնդիր է, որը, ցաւօք, մենք միայնակ չենք կարող լուծել, ունենք ձեր աջակցութեան կարիքը: Կարծում եմ, որ իւրաքանչիւրն ունի կամ պէտք է ունենայ պատասխանատուութեան իր սեփական բաժինը: Կրկին, եթէ մենք ուզում ենք ապրել ոչ թէ քաոսի, այլ կարգուկանոնի մէջ», նկատած է ան:

# «Ապաշրջափակեցէք Լաչինի Միջանցքը. ԼՂ Բնակչութիւնը Կրնայ Մնալ Առանց Պարէնի Պաշարներու». Զախարովան Դիմած է Պաքուին

Ռուսիան Ատրպէյճանին կոչ կ՚ընէ ապաշրջափակելու Լաչինի միջանցքը, ամէնշաբաթեայ ճեպազրոյցի ժամանակ յայտարարած է Ռուսիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:



Ռուսիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովա

«Մենք ծայրայեղ մտահոգութիւն կը յայտնենք Լեռնային Ղարաբաղի մէջ զինադադարի խախտման դէպքերու յաճախակիացման եւ Լաչինի միջանցքի շրջափակման պահպանման առնչութեամբ: Առկայ տեղեկատուութեան համաձայն՝ մարդասիրական իրավիճակը տարածաշրջանին մէջ կը վատթարանայ: Ցաւով պէտք է արձանագրենք, որ մատակարարումներու դադրեցման պատճառով Ղարաբաղի բնակչութիւնը կրնայ յայտնուիլ առանց պարէնի, առաջին անհրաժեշտութեան ապրանքներու եւ դեղամիջոցներու պաշարներու», ըսած է Զախարովան:

Այդ, անոր խօսքով, կը հակասէ Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներու եռակողմ պայմանաւորուածութիւններուն, այդ շարքին՝ 2020 թուականի յայտարարութեան դրոյթներուն:

«Մենք Պաքուին եւ Երեւանին կոչ կ՚ընենք բոլոր հարցերը լուծելու բացառապէս քաղաքական-դիւանագիտական ճանապարհով: Ատրպէյճանական կողմին կոչ կ՚ընենք ապաշրջափակելու Լաչինի միջանցքը, ապահովելու անով քաղաքացիներուն, փոխադրութեան միջոցներուն եւ բեռներուն անարգել տեղաշարժը քաղաքացիական նպատակներով», ըսած է Ռուսիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչը:

Ինչ կը վերաբերի խաղաղապահներու գործողութիւններուն, ապա անոնք պիտի համապատասխանեն «գետնի վրայ» իրավիճակի զարգացման: Զախարովայի խօսքով՝ անոնք պիտի երթան երկիրներու միջեւ ձեռք բերուած պայմանաւորուածութիւններու հունով:

Ռուսիան կը պահպանէ շփումները հայկական եւ ատրպէյճանական կողմերուն հետ՝ տարածաշրջանին մէջ իրավիճակի լիցքաթափման նպատակով: Այդ շփումները, դիւանագէտին խօսքով, կը շարունակուին ե՛ւ քաղաքական մակարդակով, ե՛ւ խաղաղապահ միաւորման միջոցով:

«Եւ, ի հարկէ, շատ բան կախուած է կողմերէն, անոնց քաղաքական կամքէն եւ միմեանց դէմ-յանդիման երթալու պատրաստակամութենէն: Մենք մեր կողմէ կը ներդնենք բոլոր անհրաժեշտ ջանքերը», վստահեցուցած է Զախարովան:

# ԱՄՆ Կ՚աջակցի Ատրպէյճանի Եւ Հայաստանի Միջեւ Բանակցութիւններու Շարունակման

ԱՄՆ կ՚աջակցի Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ բանակցութիւններու շարունակման, ճեպազրոյցի ընթացքին յայտնած է Պետական Քարտուղարութեան խօսնակ Մեթիու Միլլըրը:

«Մենք կը շարունակենք հաւատալ, որ համաձայնութիւնը հնարաւոր է, եւ անհամբերութեամբ կը սպասենք հետագայ բանակցութիւններուն յառաջիկայ ամիսներուն», ըսած է Միլլըր:

Հարցումին, թէ կը տեսնէ՞ բանակցային գործընթացի շարունակութիւն այդ շարքին նաեւ Ուաշինկթընի մէջ, խօսնակը չէ պատասխանած:



Պետական Քարտուղարութեան խօսնակ Մեթիու Միլլըր

Յունիսի վերջը Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Էնթընի Պլինքընի միջնորդութեամբ Ուաշինկթընի մէջ տեղի ունեցած Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարներ Արարատ Միրզոյեանի եւ Ճէյհուն Պայրամովի բանակցութիւններու աւարտին միասնական հաղորդագրութիւն տարածուեցաւ, ըստ որուն՝ կողմերը համաձայնեցուցած են համաձայնագրի նախագիծի եւս քանի մը յօդուած եւ «արձանագրել փոխըմբռնման յառաջընթաց»:

Յուլիս 21-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի բանակցութիւններ նախատեսուած են Պրիւքսէլի մէջ՝ Եւրոմիութեան Խորհուրդի նախագահ Շարլ Միշէլի միջնորդութեամբ եւ մասնակցութեամբ:

# ԵԱՀԿ ԽՎ Հռչակագրին Մէջ Ընդունուած Են Հայաստանի Բոլոր Առաջարկները

ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի 2023 թուականի եզրափակիչ փաստաթուղթը՝ նախօրէին ընդունուած Վանքուվըրի հռչակագիրը Ատրպէյճանին կոչ կ՚ընէ դուրս բերելու զինուած ուժերը Հայաստանի ինքնիշխան տարածքէն, ապահովելու մարդոց եւ ապրանքներու անխոչընդոտ անցումը Լաչինի միջանցքով՝ ըստ Արդարադատութեան Միջազգային Դատարանի Փետրուար 22-ի որոշման, նաեւ Ատրպէյճանին կոչ կ՚ընէ միջազգային հանրութեան հետ սերտ համագործակցութեամբ ձեւաւորելու դրական օրակարգ Լեռնային Ղարաբաղի հայերու իրաւունքներն ու անվտանգութիւնը երաշխաւորելու նպատակով:

Հռչակագիրը կոչ կ՚ընէ ազատ արձակելու բոլոր պահուող անձերը եւ ճշդելու Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան ընթացքին անհետ կորսուած բոլոր անձերու ճակատագրերը, պաշտպանելու տարածաշրջանին մշակութային ժառանգութիւնը եւ աջակցելու ականազերծման գործընթացին:

Փաստաթուղթը կը խրախուսէ Հայաստանին եւ Ատրպէյճանին շարունակել բանակցութիւնները համապարփակ խաղաղութեան համաձայնագրի ստորագրման ուղղութեամբ՝ հիմք ընդունելով միմեանց տարածքային ամբողջականութեան ճանաչումը, կ՚ողջունէ Միացեալ Նահանգներու եւ Եւրոպական Միութեան դիւանագիտական ջանքերը, որոնք կը նպաստեն Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ երկխօսութեան եւ փոխվստահութեան կառուցման:

«ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովը ընդունեց Հայաստանի պատուիրակութեան բոլոր առաջարկները», Ֆէյսպուքով գրած է ՀՀ Ազգային Ժողովի Արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովի նախագահ, ԵԱՀԿ ԽՎ Հայաստանի պատուիրակութեան ղեկավար Սարգիս Խանդանեանը:

Գանատայի Վանքուվըր քաղաքին մէջ տեղի ունեցող ԵԱՀԿ ԽՎ ամառնային նստաշրջանին Խանդանեանը նաեւ ընտրուած է վեհաժողովի ժողովրդավարութեան, Մարդու իրաւունքներու եւ մարդասիրական հարցերու յանձնաժողովի փոխնախագահ:

## Արցախը Չէ Հրաժարած ԱՄՆ Միջնորդութեամբ Պաքուի Հետ Հանդիպումէն. ԱԳ Նախարար




Արցախի արտաքին գործերու նախարար Սերկէյ Ղազարեան

*«Արցախը չէ հրաժարած անցեալ ամիս ԱՄՆ-ի միջնորդութեամբ երրորդ երկրի մէջ Պաքուի ներկայացուցիչներուն հետ հանդիպումէն: Այդ մասին նոյնիսկ միջնորդ կողմը չէ յայտարարած», «Ազատութեան» հարցին ի պատասխան ըսաւ Արցախի արտաքին գործերու նախարար Սերկէյ Ղազարեանը, նշելով՝ որպէսզի հանդիպումը կայանայ, անհրաժեշտ է, որ Պաքուն ցոյց տայ, որ պատրաստ է երկխօսութեան:*

*Սերկէյ Ղազարեան յայտնեց, որ Արցախը տարբեր երկիրներէ եւ միջազգային կազմակերպութիւններէ պարբերաբար առաջարկներ կը ստանայ Ստեփանակերտ-Պաքու հանդիպում կազմակերպելու համար: Քննարկումները այս ուղղութեամբ կը շարունակուին:*

*Ճնշումներու տակ բանակցութիւններ չեն կրնար տեղի ունենալ, ընդգծեց Արցախի արտաքին գործերու նախարարը:*

*Շաբաթասկիզբին Արցախի խորհրդարանի իշխող «Ազատ Հայրենիք» խմբակցութեան ղեկավար Արթուր Յարութիւնեանը «Ազատութեան» յայտնած էր, որ երրորդ երկրի տարածքին Ստեփանակերտ-Պաքու ուղիղ երկխօսութեան առաջարկ եղած է՝ ԱՄՆ-ի միջնորդութեամբ, սակայն հանդիպումը չէ կայացած Ստեփանակերտի մտավախութիւններուն պատճառով:*

*Սերկէյ Ղազարեան ընդգծեց, որ Արցախեան հակամարտութեան հետ ծանօթ անձեր գիտեն, որ Պաշտպանութեան բանակը տեղի բնակչութեան անվտանգութիւնը ապահովող կարեւորագոյն գործօն է, ինչ որ փաստացի ապացուցուած է բազմաթիւ անգամ: «Տեսնելով, թէ ինչպէս են թափ առնում ատրպէյճանական կողմի նախայարձակ գործողութիւնները, սադրանքները, յարձակողական հռետորաբանութիւնը, ապա միանաշանակ իրատեսական չէ քննարկել պաշտպանութեան բանակի կամ պետական համակարգի լուծարման հարցը, ինչը որպէս նախապայման յառաջ է քաշում Ատրպէյճանը», նշեց Ղազարեան:*

## Արմէն Գրիգորեան Հանդիպած է ԱՄՆ Նախագահի Ազգային Անվտանգութեան Հարցերով Խորհրդական Ճէյք Սալիվանի Հետ



Սպիտակ Տան մէջ հանդիպում Ճէյք Սալիվանի եւ Արմէն Գրիգորեանի միջեւ

*ՀՀ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան ֆէյսպուքեան իր էջով գրած է.*

*«Յուլիսի 6-ին Սպիտակ Տանը հանդիպել եմ ԱՄՆ Նախագահի Ազգային անվտանգութեան հարցերով խորհրդական Ճէյք Սալիվանի հետ:*

*Քննարկել ենք տարածաշրջանային եւ աւելի լայն արտատարածաշրջանային անվտանգային իրավիճակն ու մարտահրաւէրները: Այս ծիրին մէջ գրուցակցիս եմ ներկայացրել հայկական կողմի մօտեցումները մի շարք կարեւոր ուղղութիւններով:*

*Խօսել ենք երկկողմ հետաքրքրութիւն ներկայացնող հարցերի շուրջ՝ մասնաւորապէս, շեշտել ենք երկկողմ համագործակցութեան զարգացումը՝ ուժանիւթի, տնտեսութեան եւ ժողովրդավարութեան շրջանակներում»:*

## Լահէյի Դատարանը Վերահաստատեց է Իր Որոշումը, Ատրպէյճան Պէտք է Ապահովէ Լաչինի Միջանցքով Ազատ Տեղաշարժը

*2023 Թուականի Յուլիս 6-ին Արդարադատութեան Միջազգային Դատարանը կայացուցած է որոշում Ցեղապաշտական խտրականութեան բոլոր ձեւերու վերացման մասին ուխտի շրջանակներուն մէջ քննուող Հայաստան ընդդէմ Ատրպէյճանի գործով իր՝ 2023 Թուականի Փետրուար 22-ի միջանկեալ միջոց կիրառելու մասին որոշման լրացման մասին Հայաստանի խնդրանքին վերաբերեալ, որ պայմանաւորուած էր Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքին անցակէտ տեղադրելու փաստով:*

*Դատարանը վերահաստատած է իր 2023 Թուականի Փետրուար 22-ի որոշումը, որով պարտաւորեցուցած էր Ատրպէյճանին՝ ձեռնարկել բոլոր միջոցները երաշխաւորելու Լաչինի միջանցքով քաղաքացիներու, փոխադրութեան միջոցներու եւ բեռներու՝ երկու ուղղութիւններով անխափան տեղաշարժը, գտած է, որ այս պահին չկայ իր 2023 Թուականի Փետրուար 22-ի որոշումը լրացնելու անհրաժեշտութիւնը:*

## Տեղի Ունեցած Են Հայաստան-Յունաստան-Կիպրոս Պաշտպանական Խորհրդակցութիւններ




Հայաստանի, Յունաստանի եւ Կիպրոսի ներկայացուցիչները պաշտպանական խորհրդակցութեան ընթացքին

*Կիպրոսի Հանրապետութեան մէջ տեղի ունեցած են Հայաստան-Յունաստան-Կիպրոս եռակողմ պաշտպանական խորհրդակցութիւններ, որոնց ընթացքին քննարկուած են երեք երկիրներու հետաքրքրութիւններու շրջանակներուն մէջ գտնուող անվտանգային շարք մը խնդիրներ եւ համագործակցութեան հարցեր:*

*Հայկական կողմէ խորհրդակցութիւններուն մասնակցած է Պաշտպանութեան Նախարարութեան Պաշտպանական Քաղաքականութեան եւ Միջազգային Համագործակցութեան Վարչութեան պետ Լեւոն Այվազեանի գլխաւորած պատուիրակութիւնը:*

*ՀՀ ՊՆ Լրատուական Վարչութեան փոխանցմամբ, կողմերը վերահաստատած են իրենց պատրաստակամութիւնը՝ համատեղ քայլեր ձեռնարկելու երեք երկիրներու պաշտպանունակութեան եւ ռազմական անվտանգութեան ամրապնդման ուղղութեամբ:*

*Քննարկումներու բերումով ստորագրուած է եռակողմ ռազմական համագործակցութեան տարեկան ծրագիրը, որ կ'ընդգրկէ շարք մը միջոցառումներ Հայաստանի, Յունաստանի եւ Կիպրոսի մէջ:*

*Խորհրդակցութիւններու աւարտին պատուիրակութիւնները ընդունած է Կիպրոսի Ազգային բանակի հրամանատար, զօրավար-լեյտենանտ Տիմոքրիթոս Ջերվաքիսը:*

www.massispost.com

## Վարդան Օսկանեանի Բանակցող Դառնալու Յաւակնութիւնները

Շարունակուած էջ 1-էն

թեան իրաւունքներուն:

Բանակցողի հարցը արծարծողները քսան տարի ժամանակ ունէին իրագործելու իրենց ծրագիրները, երբ պայմանները որոշ չափով աւելի նպաստաւոր էին Հայաստանի համար: Անոնք չտեսնելու եկան երբ Ատրպէյճան սկսաւ զինուիլ մեծ արագութեամբ ու արտօնեցին, որ խախտուի ռազմական հաւասարակշռութիւնը՝ ի նպաստ թշնամիին: Այս իրավիճակը օգտագործելով ներկայիս Պաքու կը խօսի ու կը գործէ զօրաւորի դիրքերէն եւ իր համար նշանակութիւն չունի թէ, ով է իր դիմաց նստողը: Ան իր առջեւ դրած է նպատակներ ու կը փորձէ հասնիլ անոնց իրականացման, օգտագործելով նաեւ ռազմադաշտի վրայ ունեցած ներկայ իր առաւելութիւնը: Միւս կողմէ, Հայաստան կ'աշխատի վերականգնելու իր բանակը ու բարելաւելու իր բանակցային դիրքերը:

Օսկանեանը ոչ թէ լիազօրութիւն պէտք է պահանջէ իշխանութիւններէն, այլ այդ իրաւունքը պահանջէ՝ ժողովուրդէն: Այդ ընելու համար պէտք է նախ ներկայանայ ընտրութիւններուն ու ստանայ մանտաթ, որ ներկայիս չունի ան: Այլապէս, մեծամտութիւններն ու յաւակնութիւնները կրնան դառնալ ծիծաղի առարկայ, ոչ միայն պարզ քաղաքացիներու կողմէ, այլ եւ՝ միջազգային շրջանակներուն: Հայաստան պետութիւն է եւ ունի իր համապատասխան կառոյցները, որոնց հետ է որ կը բանակցին այլ երկիրներ:

Օսկանեան ամբարտաւանօրէն կը պահանջէ, որ Փաշինեան լռէ: Եթէ լռելու հարց կայ, ապա պէտք է լռեն բոլոր անոնք, որոնք քսան տարի զբաղած էին կողոպուտով ու այժմ կը փորձեն տարբեր ձեւերով վերադառնալ իշխանութեան, բան մը որ առայժմ չկայ Հայաստանի ժողովուրդի ապագայ ծրագիրներուն մէջ:

**Գ. ԽՈՏԱՆԵԱՆ**
**«ՄԱՍԻՍ»**

## Երեւանի Մէջ Մեկնարկեց «Ոսկէ Ծիրան» 20-րդ Ֆիլմի Փառատօնը




*Յուլիս 9-ին Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ տեղի ունեցաւ 20-րդ «Ոսկէ Ծիրան» ֆիլմի փառատօնի բացման հանդիսաւոր արարողութիւնը՝ ARARAT-ի աջակցութեամբ:*

*Փառատօնին բացումը ազդարարուեցաւ բեմադրիչ Ճեսիքա Ուուտվորթի «Լուքա» ֆիլմով: Ֆիլմին մէջ Ճերալտին Չափլինի հետ գլխաւոր դերերէն մէկը կերտած է դերասան Սամուէլ Թադեւոսեանը:*

*Այս տարի փառատօնը հիւրընկալած է բազմաթիւ յայտնի ֆիլմի գործիչներու, որոնց շարքին են եւրոպական ֆիլմի կենդանի առասպելներ Տարտըն եղբայրները, ժամանակակից հեղինակային ֆիլմի վառ ներկայացուցիչներէն մէկը՝ Լաւ Տիասը, ճափոնական ֆիլմի մշակոյթի յայտնի գործիչ Թաքեշի Քիթանօ, բրիտանացի յայտնի ֆիլմի արտադրող Ճերեմի Թոմասը եւ այլոք:*

*Բացման հանդիսաւոր արարողութեան ժամանակ Երեւանի քոնեակի գործարանի գործադիր տնօրէն Սերկէյ Խաչատրեանը յատուկ մրցանակ յանձնեց հիմնադիրներուն՝ շնորհակալութիւն յայտնելով «Ոսկէ Ծիրան» փառատօնի հիմնադիրներուն նուիրական աշխատանքին համար:*

*«20 տարի առաջ Հայաստանում հիմնադրել ֆիլմի փառատօն նշանակում էր բարդ հանգամանքներին հակադրել երազանքը: Այսօր, 20 տարի անց, վստահօրէն կարելի է ասել, որ Ոսկէ ծիրանը կերտեց ժամանակակից Երեւանի մշակութային դիմագիծը՝ հաղորդելով նրան բացառապէս նոր մշակութային միջավայր: Ոսկէ ծիրանին սպասում են ֆիլմի սիրահարները, Ոսկէ ծիրանին սպասում են երեւանցիները, Ոսկէ ծիրանին սպասում է Երեւանը, ստանալով այս օրերին տօնական իւրայատուկ տրամադրութիւն եւ հանդերձանք: Բայց հանդիսաւոր լուսարձակների ստուերում ահռելի ջանքեր են, նուիրեալների համարձակութիւնը եւ անձնուրաց աշխատանքը», նշեց Սերկէյ Խաչատրեանը:*

*«Տարին իրօք յոբելենական է հայկական ֆիլմի արտադրութեան համար: Հայ ֆիլմի 100 տարին բաժանւում է տարբեր պատմական շրջանների, որոնցից իւրաքանչիւրն իր դիմագիծն ունի: 70-ականների ֆիլմերի ոսկէ ժառանգութեան հովանու ներքոյ այժմ ունենք անկախութեան շրջանի ֆիլմերը, որն ամենահետաքրքիրը պէտք է լինի մեզ համար եւ հիմք հանդիսանայ ֆիլմի մշակոյթի շարունակականութիւնն ամրապնդելու համար», կ՚ըսէ «Ոսկէ Ծիրան» փառատօնի գեղարուեստական ղեկավար Կարէն Աւետիսեանը:*

*Ֆիլմի փառատօնի բացման հանդիսաւոր արարողութեան յաջորդեց պաշտօնական ընդունելութիւնը, որ տեղի ունեցաւ ARARAT Թանգարանին մէջ: Փառատօնին հիւրերը հնարաւորութիւն ունեցան միմեանց հետ փոխանակելու փառատօնի մեկնարկի ջերմ պահերը, ինչպէս նաեւ կարծիքներ կիսեցին փառատօնի ակնկալիքներու եւ կարեւոր դրուագներու մասին՝ վայելելով առասպելական հայկական քոնեակը, խորհրդանշական ARARAT Apricot խմիչքը, ինչպէս նաեւ անոնց հիմքով պատրաստուած խառնուրդներ:*

## Վարչապետը Ներկայ Գտնուած է Խորէն Յովհաննիսեանի Անուան Մարզադպրոցի Բացման Արարողութեան



*Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանը Երեւանի մէջ ներկայ գտնուած է յայտնի ֆութպոլիստ Խորէն Յովհաննիսեանի անուան ֆութպոլի մարզադպրոցի բացման արարողութեան:*

*Միջոցառման ներկայ եղած են նաեւ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքներու նախարար Գնել Սանոսեանը, կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրէասեանը, առողջապահութեան նախարար Անահիտ Աւանեսեանը, շրջակայ միջավայրի նախարար Յակոբ Սիմիդյեանը, Հայաստանի ֆութպոլի ֆետերացիայի նախագահ Արմէն Մելիքբեկյեանը, մարզաշխարհի բազմաթիւ ներկայացուցիչներ:*

*Ինչպէս կը տեղեկացնէ «Արմենփրես»-ը կը տեղեկացնէ վարչապետը նախ շրջած է մարզադպրոցի տարածք, ծանօթացած կատարուած աշխատանքներուն եւ երեխաներու համար ստեղծուած պայմաններուն:*

*Վարչապետը շնորհաւորած է Խորէն Յովհաննիսեանի անուան մարզադպրոցի բացման առիթով:*

*Մարզադպրոցը նախատեսուած է 250-300 երեխաներու համար, որոնք հնարաւորութիւն կ՚ունենան մարզուելու ամենօրեայ ռեժիմով:*

*Մարզադպրոցը կը համապատասխանէ միջազգային բարձր չափանիշներուն: Ունի արհեստական խոտածածկով բարձր որակի խաղադաշտ, վարչական շէնք, որ կը ներառէ ջեռուցման եւ օդափոխութեան համակարգ, լսարաններ, աշխատասենեակներ, հանդերձարաններ եւ մարզասրահ:*

## ԼՂ-ի Մէջ ՀՅ Բանակ Չկայ

Շարունակուած էջ 1-էն

*մաս է նաեւ այն միջազգային կազմակերպութիւնների եւ երկրների թիրախաւորումը, որոնք առարկայական գնահատական են տալիս ԼՂ-ում ստեղծուած մարդասիրական ճգնաժամին եւ Ատրպէյճանի գործողութիւններին», յաւելեց Նիկոլ Փաշինեան:*

*Անդրադառնալով մասնաւորապէս Ֆրանսայի նկատմամբ Ատրպէյճանի կողմէ սկսած հակաքարոզչութեան՝ վարչապետը ընդգծեց. «Ֆրանսայի դէմ ուղղուած քարոզչութիւնը այլ երկրների կողմից ԼՂ-ում հաստատուած մարդասիրական ճգնաժամին հասցեական հնարաւոր գնահատականները կանխելն է»:*

*Շնորհակալութիւն յայտնելով Ֆրանսային՝ Նիկոլ Փաշինեան նշեց, որ Հայաստանը պէտք է բոլոր միջոցները ձեռնարկէ, որ աւելի ու աւելի շատ երկիրներ եւ միջազգային կազմակերպութիւններ հանդէս գան հասցէական գնահատականներով ԼՂ-ի մէջ հաստատուած մարդասիրական ճգնաժամին վերաբերեալ:*

### Խաղաղութեան Պայմանագիրը Դեռ Պատրաստ Չէ

*«Որքան էլ այսօրուայ իրերի դրութիւնը դժուար է բարոյական, քաղաքական, անվտանգային, զգացական առումներով, խաղաղութեան օրակարգի իրացումը այլընտրանք չունի», կառավարութեան հերթական նիստին ընթացքին յայտնեց վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ յաւելեց, որ ԼՂ հայութեան իրաւունքներն ու անվտանգութիւնը պէտք է հասցէագրուէին Պաքու-Ստեփանակերտ երկխօսութեան միջազգային մեխանիզմներու շրջանակներուն մէջ, իսկ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ պէտք է ստորագրուի խաղաղութեան պայմանագիր:*

*Այո, երգ է, կոմպոզիտոր, ես միայն անունը գիտեմ՝ «Որսկան ախպեր», բայց բառերը չգիտեմ, կարծում եմ Չարենցը կ'իմանայ, քիչ առաջ նրան տեսայ նախասրահում*

*Շո՜ւտ, շուտ գտիր նրան, ես ուզում եմ իմանալ այս երգի խօսքերի հեղինակի անունը, ասաց կոմպոզիտորը:*

*Կարծում եմ Չարենցը հիմա ճաշարանում կը լինի:*

*Գնա՜, գնա՛ կանչիր նրան եւ ասա, թէ ինչի համար եմ կանչում:*

*Քիչ յետոյ, երիտասարդի հետ սենեակ է մտնում Չարենցը՝ փոքրինչ օրօրուելով:*

*Հա~, ուրեմն շա՜տ էք հաւանել «Որսկան ախպեր»ը, իհարկէ՝ հավանելու երգ է-, ես լաւ գիտեմ այդ երգը, շուտով ես էլ եմ երգելու այ՝ այնտե՜ղ-, միայնակ, ասաց բանաստեղծն ու ձեռքով անորոշ կողմ ցույց տալով՝ շարունակեց.*

*Բառերն Իսահակեանինն են:*

*Ո՞ւր է նա հիմա, հարցրեց Խաչատուրեանը:*

*Ֆրանսայում, Փարիզում:*

*Ասա՛, Չարենց, ասա խնդրեմ այդ երգի բառերը, խնդրում եմ: Ինչի՞ մասին է, թէեւ դժուար չէ ենթադրել, կարծում եմ տխուր բովանդակութիւն ունի, այդպէս չէ՞...*

*Ճիշդ ես կռահել, միայն թէ «տխուր»ը այն բառը չէ, աւելի համապարփակ, համազգային տարողութեան արժէքի բառերով է հիւսուած այդ բանաստեղծութիւնը: Դա մի ամբողջ ժողովրդի ողբերգութիւնն է՝ ամփոփուած մի քանի քառեականոց բանաստեղծութեան մէջ: Այդ իմաստով էլ դա ոչ թէ լոկ բանաստեղծութիւն է, այլ՝ պոեմ: Հայ ժողովրդի ամբողջ ողբերգութիւնն ասեմ, ճակատագիրն ասեմ, թէ բախտը թերեւս՝ ամփոփուած է այդ բանաստեղծութեան մէջ: Եւ հետաքրքիրն այն է, որ «Որսկան ախպեր»ը աւելի շատ տարածուած է որպէս երգ, քան՝ բանաստեղծութիւն: Այստեղ արդէն Իսահակեանի չափազանց գունեղ, հոգեթով, հոգի մաշող բառերն են, որ ինքնստինքեան մեղեդի են ծնում, ինչպէս նրա բազմաթիւ բանաստեղծութիւնները: Հապա լսիր.*

«Որսկան ախպեր, սարէն կուգաս,
Սարի մարալ կը փնտրես,
Ասա՜, եարա՜բ, դուն չը տեսա՞ր,
Իմ մարալիս, իմ բալիս»:

*Որքան հրաշալի է, բազմոցի վրայից վեր է թռչում Խաչատուրեանը:*

*Սպասիր, սպասի՜ր, Արամ, դու շարունակութիւնը լսիր: Ինչպէս գլխի ընկար՝ կորած որդու մայրն է որսորդին հարցնողը, ապա լսիր շարունակութիւնը.*

«Դարդի ձեռքէն սարերն ընկաւ,
Իմ արեւս, իմ բալես,
Գլուխն առաւ, քարերն ընկաւ,
Իմ ծաղիկս, իմ բալես»:

*Չարենց, ասում ես սրանք Իսահակեանի՞ բառերն են, այո՞, կարծես թէ ժողովրդականՒՋիր ներքեւ, ճաշարան, դէ դու գիտես էլի, ասա, թող մի քիչ ուտելիմելու բանման տան, ասա, որ ես եմ խնդրողը, նրանք գիտեն, թէ ինչ են տալու, ասա նաեւ, որ համերգի եմ պատրաստւում...*

*Քիչ անց, սկուտեղի վրա արուեստագիտօրէն շարուած աղանդերներ ու խմիչք են բերում Խաչատուրեանի սենեակը: Չարենցը մէկ ումպով խմում է դուդուկահարի լցրած լի բաժակը, եւ՝ առանց հրաւէրի սպասելու, սկսում է շարունակել կիսատ թողած երգը: Դուդուկահարը արագօրէն հանում է գործիքը, դնում շրթներին ու փորձում է գտնել երգի տոնայնութիւնը եւ երգի կէսից միանում է «երգիչ» Չարենցին:*

«Տեսայ, քուրիկ, դարդոտ բալեդ,
Քարն է դրեր բարձի տեղ,
Անուշ քնով տաք գնդակն է
Կրծքում գրկեր եարի տեղ»:

*-Չարենցը չի կարողանում շարունակել երգը-, աչքերից հոսում են արցունքները, փորձ անգամ չի անում թաշկինակ հանել գրպանից: Նրա միտքն այլ տեղ է, առաւօտեան կանչուած է հարցաքննութեան...:*

*Կոմպոզիտորը պապանձուել էր կարծես, նրա աչքերն էլ են թրջուել:*

*Դեռ մի քառեակ էլ կայ, արցունքների միջից հազիւ կարողանում է ասել բանաստեղծը*

*Արդէն ոչ առաջվա նման երկչոտ, վստահօրէն, ձայնը փոքրինչ բարձրացնելով, շարունակում է երգել Չարենցը.*

Սարի մարմանդ հովն է շոյում,
Ճակտի փունջը մարալիդ,
Ծաղիկներն են վրան սգում,
Ազիզ բալիդ, խեղճ լալիդ:

*-Աւարտւում է երգը: Ոչ մի ձայն, ոչ մի շշուկ: Դադարել են նոյնիսկ ներքեւի յարկից եկող թեթեւ երաժշտութեան հնչիւնները: Լռութիւն է ամէնուր, լռութիւն՝ ողջ «Ինտուրիստ» հիւրանոցում: Առանց որեւէ խօսք ասելու, առանց հրաժեշտի, Չարենցը մօտենում է դրանն ու՝ մեղաւոր ժպիտը դէմքին, կամացուկ դուրս է գալիս սենեակից:*

*Երիտասարդ, ես այդպէս էլ չիմացայ, քո անունը, բաւական երկար լռութիւնից*

*Յետոյ ասում է չփոթուած Խաչատուրեանը՝ դիմելով դուդուկահարին:*

*Լեւոն է անունս, Մաեստրո, Լեւոն Մադոյեան:*

*Լեւոն, լաւ անուն ունես, երիտասարդ, ընդհանրապէս մեծ անուն է Լեւոնը. Լեւոն Շանթ, Լեւոն Զոհրապեան...: Հիմա ինձ լսիր, բարեկամս: Դու մեծ, շատ մեծ բան արեցիր այսօր: Ես լսեցի քո նուագը: Վստահ եմ լաւ երաժիշտ ես դառնալու: Դու նուրբ հոգի ունես, գործիքի հրաշալի տեմբր, եւ, որ ամենակարեւորն է, դու այսօր ինձ ներկայացրիր ժողովրդական երաժշտութեան իսկական մի մարգարիտ: Բայց, ցաւում եմ, որ այն չեմ կարող օգտագործել իմ «Երջանկութիւն» բալետում («Գայանէ»): Դա մի ուրախ բալետ է լինելու, որի մէջ արտացոլուելու է ժողովրդական ցնծութիւն եւ տօնախմբութիւն: Իսկ քո այդ մեղեդին՝ «Որսկան ախպեր»ը, ողբերգութիւն է, մի ամբողջ ժողովրդի ողբերգութիւն: Բայց ես երբեւէ կ'օգտագործեմ այն, այդ սքանչելի մեղեդին:*

***

*Արամ, դու զբաղուած էիր, ես չ'ուզեցի քեզ անհանգստացնել: Հիմա կարող եմ ասել: Քիչ առաջ, վերջին լուրերում յայտնեցին, որ ձերոնք՝ հայրենակիցներդ, Հայկական Թամանեան զօրագունդը, ճեղքել է թշնամու պաշարումը եւ մօտենում է Բեռլինի մատոյցներին:*

*Իսկապէ՞ս, Նինա, սիրելիս, ես այդպէս էլ գիտէի, ուրիշ կերպ չէր կարող լինել: Ես միշտ էլ հաւատացել եմ մերոնց ուժին ու կարողութեանը: Արդէն կասկած չի հարուցում պատերազմի ելքը: Ես պիտի անմահացնեմ իմ ժողովրդին այս պատերազմում, եւ, ընդհարապէս, շատ բան կորցրած իմ հայրենակիցներին:*

*Յիշո՞ւմ ես, Նինա, սիրելիս, ես քեզ պատմել եմ գրեթէ տասը տարի առաջ Երեւանում պատահած դէպքի մասին, կապուած «Որսկան ախպեր» ժողովրդական երգի հետ:*

*Իհարկէ, յիշում եմ, դու երկար աշխատեցիր այդ երգի վրայ, բայց՝ ինչպէս սպասւում էր, չկարողացար այն օգտագործել բալետում:*

*Այժմ եկել է առիթը, Նինա, հասկանո՞ւմ ես: Ես պիտի նոր կեանք տամ այդ երգին, ճիշդ է, դժբախտաբար Չարենցը չկայ, բայց կա Չարենց ծնող ժողովուրդը, կա այն դուդուկահար երիտասարդը, որը, ինչպէս իմացայ, Հայաստանի ռադիոյի արժեքաւոր երաժիշտներից է, ես նրան էլ եմ խոստացել նոր կեանքի կոչել «Որսկան ախպեր»ը:*

*-Պատերազմի աւարտից մի քանի ամիս յետոյ, աշխարհը հիացաւ Արամ Խաչատուրեանի Երկրորդ սիմֆոնիայով, որի երրորդ մասում կեանքի էր կոչուել Իսահակեանի, Լեւոնի եւ Չարենցի երգը՝ «Որսկան ախպեր»ը, դասականի ճանապարհով դէպի յաւերժութիւն գնացող հայ ժողովրդական այդ պարզ ու անպաճոյճ երգը:*

# Երբ Մեր Ընդհանրական Շահերը Գերադաս Համարենք

ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

*Եկեղեցական կամ ազգային բնոյթ ունեցող որեւէ հանրային ծառայութիւն կենսական տուեալ մըն է մեր գոյութիւնը պահպանելու համար: Մեր եկեղեցիները, դպրոցները, կազմակերպութիւնները եւ հաստատութիւնները չեն կրնար գոյատեւել առանց ծառայութեան լծուած նուիրեալներու:*

*Սակայն ծառայութեան լծուած պատասխանատու դիրքերու վրայ գտնուող մարդոց միջեւ փոխ-յարաբերութիւնը կարեւոր ազդակ մըն է հանրային գործը լաւագոյն կերպով յառաջ տանելու:*

*Հանրային ծառայութեան նուիրեալներ որչափ ալ խելացի եւ աշխատասէր ըլլան եթէ իմաստութիւն չունին բարեացակամ եւ բարեկամական կապեր հաստատելու իրենց գործակիցներուն հետ իրենց տարած աշխատանքը մեծապէս կրնայ տուժել, կամ կրնայ ձախողիլ: Համագործակցութեան համար անհրաժեշտ է դրական յարաբերութիւններու մշակումը: Բարեկամական յարաբերութիւններ մեծապէս կը նպաստեն կարեւոր նախաձեռնութիւններ համագործակցաբար յառաջ մղելու եւ յաջողութեան հասցնելու, որմէ որոշապէս կրնան նպաստաւորուիլ հասարակութեան մը ընդհանրական շահերը:*

*Անտարակոյս, բարեկամական կապերն ու յարաբերութիւնները իրենց կարեւոր դերը ունին մեր հաւաքական կեանքին մէջ: Բայց եթէ այդ կապերը չահագործուին կամ չարաշահուին կրնան մեծ վնասներ հասցնել մեր հասարակական կեանքի շահերուն: Պէտք է մատնանշել որ սխալ հասկցուած կամ մեկնաբանուած բարեկամական յարաբերութիւնները կրնան իրենց ժխտական անբաղձալի արդիւնքները ունենալ: Բարեկամական կապերէ մեկնելով երբ հանրային ծառայութեան նուիրուած մարդիկ սկսին աչք գոցել իրարու սխալներուն եւ իրենց յանցանքները պարտկել՝ այդ տեսակ սխալ մեկնաբանուած բարեկամութիւններ ի վերջոյ վնասակար կը դառնան պաշտպանուող անձերուն եւ հաւաքականութեան ընդհանրական շահերուն:*

*Անձամբ ականատես եղած ենք միութենական կեանքի մէջ պատահած կարգ մը խնդիրներու, որոնք «կարգադրուած» կամ «լուծուած» են բարեկամական հաշիւներով՝ ի գին կարգ մը սկզբունքային կամ բարոյական զիջումներու: Իրազեկ ենք պարագաներու, երբ մարդիկ իրենց ազգականները կամ բարեկամները պաշտպանելու համար լռութեամբ մեղսակցած են անոնց գործած յանցանքներուն եւ մեղքերուն:*

*Նկարագրի եւ սկզբունքի տէր եղող մարդիկ իրենց ազգականներուն եւ բարեկամներուն հետ կրնան տարակարծիք ըլլալ ընդհանրական բնոյթ ունեցող հարցերու մասին առանց իրենց բարեկամական կամ ազգականական կապերը խախտելու: Բայց աւելին, առողջ բարեկամական եւ սիրոյ կապերը կ՛ամրապնդուին անկեղծ եւ անշահախնդիր փոխյարաբերութիւններով:*

*Եթէ բարեկամական կամ ազգականական կապերը ճշմարիտ ու անկեղծ սիրոյ վրայ հիմնուած են, այն ատեն յանուն արդարութեան եւ ճշմարտութեան եղած որեւէ դիրքորոշում փոխանակ տարակարծութիւն ստեղծելու՝ պատճառ դառնալու է, որ փոխադարձ սիրոյ կապերը աւելի եւս զօրանան:*

*Մեր միութենական, հանրային եւ եկեղեցական կեանքը որչափ աւելի առողջ եւ կենսունակ պիտի ըլլար եթէ մարդիկ կարենային գերադաս համարել մեր ընդհանրական շահերը իրենց անձնական, ընտանեկան, բարեկամական եւ խնամիական շահերէն:*

*Աւելի անդին նայելով, երբ մեր հայրենական եւ ազգային շահերը նկատի ունենանք, այսօր մեր հայրենիքը շատ աւելի հզօր պիտի ըլլար եթէ անցնող քանի մը տասնամեակներու իրերայաջորդ մեր հայրենի վարչակարգերը մեր հայրենիքի շահերը գերադաս համարէին իրենց անձնական, բարեկամական եւ կուսակցական շահերուն եւ կարող ըլլային յայտարարելու «Կը սիրեմ Կեսարը, բայց Հռոմը աւելի», կը սիրեմ բարեկամներս կամ ազգականներս, բայց արդարութիւնը, ճշմարտութիւնը եւ մեր ընդհանրական եւ ազգային շահերը աւելի գերադաս կը համարեմ:»*

ՆԱՅԻՐԻ

ԾԱԽՈՒ Է

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ–ի

1958 - 1975 թուականներու

Լրիւ Լաթակազմ Հաւաքածոները

Յանկացողներէն կը խնդրուի հեռաձայնել հետեւեալ թիւին

626-354-5924

# «Ո՞վ Չի Սիրեր Պէյրութը»



ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ

*Պահրէյնի Թագաւորութիւնը կը գտնուի Արաբական (Պարսից) ծոցի շրջանին մէջ: Անոր տարածութիւնը 760 քառակուսի քիլոմեթր է: Պահրէյն կազմուած է 50 բնական ու 33 արհեստական կղզիներէ եւ ունի գեղեցիկ ծովեզերք, բարձր որակի շինարարական կառոյցներ ու, տակաւին, ամբողջ կղզիի տարածքին կան արմաւենիի եւ ձիթապտուղի ծառեր:*

*Աշխարհագրական տարածութեամբ փոքր այս կղզին այսօր դարձած է տնտեսական ու մշակութային կեդրոն եւ զբօսաշրջիկներ հմայող երկիր: Այս փոքր կղզին այսօր դարձած է գեղեցիկ եւ կը հմայէ այցելուները:*

*Պահրէյնի գեղեցկութիւնը ինծի համար նաեւ այլ տեղ կը գտնուի: Այս «այլ տեղ» գտնուող գեղեցկութիւնը չի ծածկեր կամ ստորադասեր վերը յիշուած բոլոր միւս տուեալները: Պահրէյնի այլ գեղեցկութիւնը իր ժողովուրդին մէջ է: Պահրէյնցիները պարզ են, բարի եւ ընկերային: Այս երեք յատկանիշները ինծի համար դարձած են յատկանշական գեղեցկութիւններ, որոնք աշխատանքային յաճախակի այցելութիւններուս ընթացքին միշտ ալ սիրած եւ գնահատած եմ:*

*Այս յատկանիշները կը սկսիս տեսնել ու վայելել օդակայանէն եւ անոր պետական թէ սեփական օդանաւային ընկերութիւններու պաշտօնեաներուն միջոցով: Միշտ չէ, որ կրնաս հանդիստ զրուցել տարբեր օդակայաններու անցագիրները ստուգող պետական պաշտօնեաներու հետ: Հոն կրնան ըլլալ անձեր, որոնք կ՛ըլլան շատ լուրջ եւ խոժոռ դէմքով, ինչ որ որեւէ ձեւի հաղորդակցութիւն անկարելի կը դարձնէ: Պահրէյնի պարագային բոլորովին տարբեր է:*

*Իւրաքանչիւր այցելութեանս ընթացքին միշտ ալ կը սիրեմ զրուցել պետական պաշտօնեաներուն հետ, եւ իրենք ալ նոյնպէս կ՛ընդառաջեն: Մարդկային հաղորդակցութիւն մըն է, որ կը ստեղծես, թէկուզ՝ քանի մը վայրկեան, ինչ որ գեղեցիկ է եւ հաճելի:*

*17 յունիս 2023:*

*Կը մտնեմ Պահրէյնի գեղեցիկ, նորակառոյց եւ հսկայ օդակայանը՝ ճամբորդելու համար դէպի*

***Քուէյթ:** Երիտասարդ տղաք ու աղջիկներ կ՛ընդունին քեզ: Նոյն ժպիտն է եւ լաւ տրամադրութիւնը: Կիպրական անցագիրս տուի Ալիին: Նայեցաւ ինծի ու անգլերէնով հարցուց.*

*«Ո՞ւր պիտի ճամբորդես»:*

*«Քուէյթ պիտի երթամ», ըսի Ալիին արաբերէնով:*

*Ալիին դէմքին վրայ գծուեցաւ ժպիտ մը: Ան դարձեալ բացաւ անցագիրս եւ այս անգամ աւելի զգուշ նայելով՝ կրցաւ տեսնել, որ Պէյրութ ծնած եմ:*

*«Ահա՜, լիբանանցի ես»: Ալիին դէմքին վրայ երեւցաւ արտասովոր ժպիտ եւ խանդավառութիւն: Ան առիթը ունեցած է մէկ անգամ Պէյրութ այցելելու: Ալին սկսաւ պատմել Պէյրութի իր փորձառութիւնը:*

*«Սիրեցի՞ր Պէյրութը»:*

*«Ո՞վ չի սիրեր Պէյրութը», եղաւ Ալիին հաստատ պատասխանը: «Տարբեր քաղաք է, որ կարելի չէ չսիրել»:*

*Ալին ամէն ձեւով օգտակար դարձաւ ինծի: Մէկ կողմէ պահրէյնեան իր ընկերային բնաւորութիւնը, միւս կողմէ՝ նաեւ Պէյրութը միացնող օղակներն էին այդ օր մեր հաղորդակցութեան:*

*«Պէյրութը ո՞վ չի սիրեր»:*

*Իմ աւելի քան երեսուն երկար տարիներու ճամբորդական կեանքիս մէջ պէտք է ընդունիմ, որ յաճախ լսած եմ, որ՝ «Պէյրութը տարբեր է»: Ու տակաւին՝ «Լիբանանը ուրիշ է»: Այս յիշատակումները շեշտուած կերպով կը լսեմ Արաբական ծոցի շրջանի երկիրներուն մէջ:*

*Շրջանին մէջ որ այլուր քաղաքական ի՛նչ իրադարձութիւն թէ կեցուածք որ ալ ըլլայ, անոնք որեւէ ձեւով չեն խանգարեր, որ մարդիկ միշտ ալ արտայայտուին, որ՝ «Պէյրութը գեղեցիկ քաղաք է»:*

*Այդ օր Պահրէյնի օդակայանը նստած՝ մտածեցի Ալիին եւ իր արտայայտութեան մասին. «Ո՞վ չի սիրեր Պէյրութը»: Եթէ Ալին եւ իր նմանները կը սիրեն Պէյրութը, հապա մե՞նք: Բոլո՛ր լիբանանցիներս:*

*Լիբանանը տագնապի մէջ է՝ քաղաքական, տնտեսական, ելեւմտական, ընկերային եւ, տակաւին, այլ բնագաւառներու մէջ: Բազմապատկուած եւ բազմապատկուող տագնապներ մէկը միւսին վրայ աւելնալով՝ քիչ մը աւելի կը մխրճեն երկիրը դէպի անդունդ: Մարդիկ լոյսի եւ յոյսի նշոյլը չտեսնելով՝ կ՛ուզեն հեռանալ:*

*Ալին կը սիրէ Պէյրութը: Ու տակաւին, ան հաստատօրէն համոզուած է, որ բոլորը կը սիրեն Պէյրութը: Այս կը նշանակէ, որ «սէր»-ը պէտք է դուրս բերել իր բառացի ու հոմանշային հասկացողութենէն եւ գայն դնել խորքային, գործնական եւ աշխատանք ար-*

Շար.ը էջ 15

# Լարքի Շրջանաւարտների Համերգ Հնչեցին Հայդն, Մոցարտ, Բալակիրեւ, Բաբաջանեան...



ԿԱՐԻՆԷ ՏԷՐ ԳԷՈՐԳԵԱՆ

*Ինչպէ՞ս կազմուեց երգահանների խմբի այս դասաւորութիւնը:*

*Այսպիսի համադրում կարող էր ստացուել միայն Լարք երաժշտանոցում, ուր բարձրագոյն ընթացք աւարտողներն իրենց դիպլոմները ստանալու համար պարտաւոր են ներկայացնելու դաշնամուրային կոնցերտ՝ սիմֆոնիկ նուագախմբի ընկերակցութեամբ: Միաժամանակ, 10-րդ դասարանի աշակերտները պէտք է վերջացրած լինեն կատարողական եւ երաժշտագիտական պահանջուած առարկաների դասընթացները:*

*Երաժշտանոցն իր հիմնադրման օրից ի վեր հայ համայնքին պարգեւել է բարձրագոյն երաժշտական վկայականով մօտ 35 ուսանողներ: 2022-2023 ուսումնական տարեշրջանում այդ պայմանները լրացրել էին 4 ուսանողուհիներ՝ Սինթիա Ղազարեանը, Նաթալի Անթոնոփուլոսը, Մարի Արօն եւ Քաթրին Յարութիւնեանը:*

*Ուսումնական տարուայ սկզբում, իւրաքանչիւր շրջանաւարտ՝ ուսուցչուհու հետ միասին,*



*որոշել էին իրենց նախընտրած կոնցերտը: Համատեղ ջանքերից յետոյ, նաեւ՝ առաջնորդութեամբ ընդհանուր հիմնական խորհրդատու Վաչէ Պարսումեանի, աւարտող ուսանողները շաբաթներ առաջ սկսել էին աշխատանքները այդ ելոյթների նուագախմբի ղեկավար, դոկտոր Կարինէ Աւագեանի հետ՝ երկու դաշնամուրների վրայ, իրենց ուսուցիչների նուագակցութեամբ:*

*Զոյգ դաշնամուրներով փորձերն աւարտուել էին: Սպասւում էր միայն մէկ փորձ սիմֆոնիկ նուագախմբով, եւ յաջորդ օրը՝ Կիրակի, 18 Յունիս 2023, կ.ե. ժամը 3-ին, Լարք համալիրի թեւաշէնքում գտնուող «Ժօժէնի եւ Գէորգ Քէշիշեան» համերգասրահում կայանալու էր մեծ ելոյթը:*

*Աւարտական համերգի ընթացքում լսելու էինք իւրայատուկ ծրագիր, որ հետեւեալն էր.*

*-Joseph Haydn: Piano Concerto #2 in G Major, mov.1- Սինթիա Ղազարեան (դասատու՝ Նունէ Բաղդասարեան)*

*-W. A. Mozart: Piano Concerto #21 in C Major, II and III mov.- Նաթալի Անթոնոփուլոս (դասատուներ՝ Հռիփսիմէ Յովսէփեան/ Վիկտորիա Սիմոնեան)*

*-Mily Balakirev: Piano Concerto in F-sharp minor- Մարի Արօ (դասատու՝ Կարինէ Տէր-Գէորգեան)*

*-Arno Babajanian: Heroic Ballad for Piano and Orcestra-Քաթրին Յովհաննիսեան (դասատու՝ Սուսաննա Աթասունց):*

*Նոյնիսկ արհեստավարժ կատարողների համար մեծ պատասխանատուութիւն է նուագախմբի հետ նման կարճ ժամանակ աշխատելով բեմ բարձրանալը, սակայն մեր անուշիկ օրիորդները՝ կատարեալ տիրապետելով իրենց ընտրած գործի երաժշտական տեքստին, դրա ստեղծման պատմութեանը, պատրաստ զինուորների նման միացան նուագախմբին եւ իրենց խմբավար Կարինէ Աւագեանի հետ պատուով դուրս եկան բեմական պայքարից, կարողացան արժեւորել իրենց յանձնուած վկայականները:*

*Երբ Վաչէ Պարսումեանը պատրաստում էր կոնցերտների օրկեստրային բաժինները, հարց էր ռուս կոմպոզիտոր Մ. Բալակիրեւի (1836-1910) գործի պարագան՝ այն երբեւէ չէր նուագուած այստեղ: Ընդհանուր պարտիտուրը գտնելուց յետոյ, երբ երաժշտանոցի բաժինները, այնտեղ կցուած էր մի երկտող. «Ահա պարտիտուրայի 66 էջերը: Պատկառանք այն երաժիշտների հանդէպ, ովքեր պիտի կատարեն այս գործը. Ձեր խոնարհ ծառան՝ Վլադիմիր»:*

*Ունենք շատ ու շատ աշխատանքային այլ հետաքրքրական մանրամասնութիւններ՝ ոգեւորող եւ ուրախացնող, խիզախող եւ սքանչացնող, միայն թեւեր են պէտք ճախրելու համար: Մեծ հաճոյք էր նաեւ համագործակցել Լարքի շրջանաւարտ աշխատակիցների հետ, ովքեր եւս անցել էին այդ ճանապարհը եւ ամէն գնով թեւ ու թիկունք էին կանգնում իրենց կրտսեր ընկերներին:*

*Ի՞նչ է նշանակում կատարել Հայդնի եւ Մոցարտի նրբագոյն կոնցերտները՝ զգալով դրանց ստեղծման ժամանակի շունչը, նուագել Բալակիրեւի շոպենեան ազդեցութեամբ ռուսական երաժշտութիւնը ու կարողանալ ունկնդրին փոխադրել այդ ժամանակաշրջանը եւ վերջապէս՝ ձեռք առնել ներկայացնելու Բաբաջանեանի «Հերոսական բալլադը» եւ հերոսաբար կատարել ազգային այդ երաժշտութիւնը:*

*Ու այս ամէնը կատարւում էր Լարք երաժշտանոցում:*

*Նոյն օրը նոյնպէս ելոյթ էին ունենում եւ միջնակարգ ծրագրի (7րդ դասարանի) իրենց վկակայականներն էին ստանում Ալեքսանդր Յարութիւնեանը (թաւջութակ, դասատու՝ Մադլէն Սարգիսեան), Լէօ Գասպարեանը (դաշնամուր, դասատու՝ Սուսաննա Աթասունց), Սոֆիա Գէորգեանը (դաշնամուր, դասատու՝ Նունէ Քարթալեան) եւ Ալեքսանդրա Նեմիրովսկայան (դաշնամուր, դասատու՝ Կարինէ Տէր Գէորգեան), որոնցից մի քանին շարունակելու են իրենց ուսումը՝ հասնելու բարձրագոյն վկայականին:*

*Ինչպէս միշտ, համերգի ընթացքը հմտորէն վարում էր փոխտնօրէնուհի Թագուհի Արզումանեանը, ում եւ երաժշտանոցի տնօրէնուհի Նարինէ Թադեւոսեանի ձեռամբ էլ յանձնուեցին բոլոր վկայականները, նաեւ՝ գերազանցիկ աշակերտների պատուոգրերը:*

*Մի տարի եւս յաւելուեց Լարք երաժշտական ընկերակցութեան երաժշտանոցի ստեղծման պատմութեանը՝ աւելացնելով նոր շրջանաւարտների անուններ, ովքեր միշտ վառ պիտի պահեն հայ մշակոյթի անմար ջահը:*

# Արեւմտեան Ափը Կ՛Օժտուի Կրթական Նոր Կառոյցով՝ «Նարինեան» Դպրոցով



*Վերջին տասնամեակներուն, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի բազմաթիւ նախաձեռնութիւններու շարքին կարեւոր օղակ մըն է Նարինեան Դպրոցի բացումը Կլենտէլի հայահոծ մեր գաղութէն ներս:*

*Անցնող տարիներուն, Արեւմտեան Թեմը ոչ մէկ ջանք չխնայելով ի խնդիր մայրենի Եկեղեցւոյ ուղղափառ հաւատքի պահպանութեան, իր լայնածաւալ առաքելութեան զուգահեռ, օրակարգի կիզակէտ դարձուց նոր սերունդի հայապահպանութեան հարցը եւ մեր ոսկեղնիկ լեզուի ուսուցումը:*

*Մարդ արարածին համար հրամայական ու պարտադիր քայլ մըն է մանաւանդ պատանի իր տարիքէն սերտօրէն կապուած մնալ եւ քայլ պահել գիտութեան յառաջդիմութեան հետ՝ յաճախելով կրթական հաստատութիւն՝ դպրոց: Իսկ աշխարհացրիւ հայ մարդուն համար, հայ դպրոց ունենալն ու զայն պահելը հրատապ խնդիր է, որովհետեւ հայ դպրոցի առաքելութիւնը եղած է ու պիտի մնայ հայը հայ պահել եւ անոր մէջ հայրենասիրութիւն սերմանել: Հետեւաբար, Սփիւռքի տարբեր գաղթօճախներու մէջ ամէնօրեայ հայկական դպրոցը մեծ եւ անփոխարինելի դեր ունեցած է եւ ունի:*

*Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան ափերուն վրայ գնահատելի ջանադրութեամբ եկեղեցի եւ դպրոց կառուցել, լեզու եւ մշակոյթ պահել, կը նշանակէ մեր նոր սերունդի զաւակներուն մէջ կենդանի ու կանգուն պահել մեր դարաւոր հաստատութիւնները:*

*Մանկապարտէզէն մինչեւ հինգերորդ դասարան ընդգրկող Նարինեան Դպրոցի բացումն ու առաքելութիւնը Արեւմտեան Թեմի գաղութներէն՝ հայահոծ Կլենտէլի մէջ, եզակի ցուցանիշ է, թէ հայուն մէջ կը շարունակէ ապրիլ հաւատքը, հայրենի հողը, լեզուն եւ մշակոյթը, եւ մանաւանդ ամրագրելու այն հաստատ համոզումը, թէ մեր հայրենակիցներուն հաւատարմութիւնն ու աջակցութիւնը Հայ Եկեղեցիին եւ դպրոցին նկատմամբ կը մնայ անխախտ:*

*Անցնող տարիներու ընթացքին երբ բազմաթիւ նախաձեռնութիւններ կեանք առին եւ ծաղկեցուցին Արեմտեան Թեմը, այսօր, առաւել խստապահանջութեամբ եւ աչալրջութեամբ պիտի շարունակենք մեզի վստահուած քրիստոնէական ու հայեցի կրթութեան առաքելութիւնը:*

***ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ***

*Ձեր զաւակները արձանագրելու համար զանգահարել կամ կապուիլ.-*

***ՆԱՐԻՆԵԱՆ ԴՊՐՈՑ, Կլենտէլ.***

*Մանկապարտէզէն Հինգերորդ դասարան*

*818.558.7474*

*info@narinyanschool.org*

*NARINYAN SCHOOL in Glendale*

*Opening Soon!*

*Preschool through 5th Grade*

*For enrollment please call or email:*

*info@narinyanschool.org*

*818.558.7474*

*214 W Fairview Ave,*

*Glendale, CA, 91202*

*Դիւան Առաջնորդարանի*

www.massisweekly.com

## Հայութեան Տեղաշարժերը եւ Փոխակերպումները

Շարունակուած էջ 11-էն

*կի քննարկումը մեզ հնարաւորութիւն կը տայ առաւել պատրաստ դիմագրաւել գալիք փոխակերպումներին»:*

*Գիտաժողովի պաշտօնական բացման հիւր բանախօս՝ Դոկտ. փրոֆեսոր Խաչատուր Ստեփանեան իր՝ «Ի. դարում տեղաշարժերով պայմանաւորուած հայութեան փոխակերպման գործընթացի փուլերը» զեկոյցին մէջ հայկական փոխակերպման գործընթացները բաժնեց երեք տարբեր փուլերու, եւ ներկայացուց հայութեան՝ այդ փուլերուն ընթացքով տեղի ունեցած կենցաղային, ընկերային, լեզուամշակութային եւ այլ հիմնական փոխակերպումները:*

*Պաշտօնական բացման նիստի փակման իր խօսքին մէջ, Հայկազեան Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեան հարց բարձրացուց թէ՝ «մեր ազգային պետական կամ ոչ-պետական իրականութեան մէջ, որո՞ւն պարտականութիւնն է բիւրեղացնել այնպիսի ռազմավարութիւն մը, որ պիտի նպաստէ հայկական ապահովութեան-անվտանգութեան, ազգային, կրթա-դաստիարակչական, ռազմական, զինուորական, լեզուական, բարոյակրօնական, ընկերային, տնտեսական, կենսոլորտային,* cyber, *եւ այլ ոլորտներուն» եւ նկատեց՝ «Սփիւռքեան լայն տարածքին վրայ, կենսական է որ ռազմավարութիւնները ունենան պատմական, գիտական, քաղաքական, դիւանագիտական եւ մշակութային խորք, որ կը հասնի Երեւանէն շատ անդին եւ կը կարգաւորէ ընդհանրական հայկականութեան գոյութիւնը»:*

*Գիտաժողովի յաջորդող երկու օրերուն՝ Չորեքշաբթի 28 եւ Հինգշաբթի 29 Յունիսին, սահիկաշարերով* (powert point) *ներկայացուեցան 17 զեկոյցներ: Փրոֆեսոր Վաչագան Գրիգորեան վերլուծեց Ի. դարու հայ արձակի փոխակերպումները, Դոկտ. Յակոբ Չոլաքեան մանրամասնեց արեւմտահայերէնի փոխակերպումները, Փրոֆ. Քլոտ Արմէն Մութաֆեան կատարեց պատումը Կարպատեան Եւրոպայի հայերուն՝ 1900-էն ի վեր, Փրոֆ. Վահրամ Շէմմասեան (հեռակայ)՝ լուսաբանեց Մուսա Լերան հայերու փոխակերպումները, Դոկտ. Լուսինէ Սահակեան՝ Համշէնահայերու Ի. դարու արտագաղթերու հետեւանք ինքնութենական փոխակերպումներու մարտահրաւէրները, Դոկտ. Կարէն Մկրտչեան քննարկեց Իրանի հայօճախի 1979-2020 շրջանի տեղաշարժերուն հետեւանքով յառաջացած ընկերային-կրթական խնդիրները, Դոկտ. Անի Ֆիշենկճեան խօսեցաւ սուրիահայերու 1946-2010 շրջանի տեղաշարժերուն եւ ասոնց հետեւանք՝ փոխակերպման մարտահրաւէրներուն մասին, Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեան լուսարձակի տակ առաւ Հայ Աւետարանական Եկեղեցիին փոխակերպումները, Դոկտ. Հրաչ Չիլինկիրեան գնահատումը կատարեց Հայ Եկեղեցւոյ հաստատութենական աշխարհիկացման՝ ԺԹ.-ԻԱ. դարերուն, Դոկտ. Ռաֆֆի Չերչեան քննեց հայ կրօնական ճարտարապետութեան մէջ յառաջացած փոխակերպումները, Դոկտ. Ժոզեֆ Յովհաննիսեան կեդրոնացաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան 1920-30-ականներուն ապրած տարագրութեան եւ փոխակերպումի դրուագներուն վրայ, Դոկտ. Լիլիթ Յովհաննիսեան լուսաբանեց յետանկախական հայրենի պատմագրութեան փոխակերպումները՝ Հայկական Հարցի 1878-1923 շրջանի դիւանագիտական երեւակներու լուսաբանման առնչութեամբ, Վիլէն Մնացականեան մանրամասնեց Հայաստանի Հանրապետութեան տնտեսական քաղաքականութեան փոխակերպումը՝ ծրագրային եւ շուկայական տնտեսութեան ժամանակաշրջաններուն, Դոկտ. Խաչիկ Մուրատեան բացայայտեց Հայոց ցեղասպանութեան ուսուցման փոխակերպումները՝ անցեալ, ներկայ եւ նոր ուղղութիւններու համապատկերին մէջ, Դոկտ. Յակոբ Թադէոսեան վերլուծեց հայրենասիրութեան ընկալման եւ դրսեւորումներու ընկերահոգեբանական փոխակերպումները, տիար Յարութ Սասունեան արծարծեց Սփիւռքի ներկայացուցչականութեան փոխակերպումները եւ սփիւռքահայ խորհրդարանի մեկնարկման ծրագիրը, իսկ Տիգրան Եկաւեան քննարկեց Հայաստանի Հանրապետութիւն-Սփիւռք փոխյարաբերութիւններու փոխակերպումները: Գիտաժողովի առաջին օրուան Բ. նիստին տեղի ունեցաւ Փրոֆ. Մութաֆեանի նորագոյն՝* «Jerusalem et les Armeniens jusqu'a la conquete ottomane (1516)» *գիրքին շնորհահանդէսը, ուր Դոկտ. Տագէսեան ներկայացուց անխոնջ եւ բեղուն գիտնականին վաստակը, իսկ հեղինակը ներկայացուց հատորը եւ հատորին ընդմէջէն՝ հայութիւնը Երուսաղէմի մէջ մինչեւ ԺԶ. դարասկիզբը:*

*Գիտաժողովի ութ նիստերը վարեցին դոկտորք Վաչագան Գրիգորեան, Արմէն Իւրնէշլեան, Խաչիկ Մուրատեան, Ժոզեֆ Յովհաննիսեան, Խաչատուր Ստեփանեան, Անդրանիկ Տագէսեան եւ Եղիա Թաշճեան: Զեկուցողներէն իւրաքանչիւրին յատկացուած էր կէս ժամ, որպէսզի կարելի ըլլայ աւելի խորքային-վերլուծական-քննական ու գործնական յառաջադրանքներ ներկայացնել: Գիտաժողովին մէջ յատկանշական էին զուգահեռները՝ Մուսա Լերան, Համշէնի եւ Կարպատեան Եւրոպայի հայկական, ինչպէս նաեւ Իրանի ու Սուրիոյ հայօճախներու ենթախումբերուն միջեւ: Համապատկերային բնոյթ կը կրէին լեզուի եւ գրականութեան գիտական մեկնաբանութիւնները: Հաստատութենական առումով ուշագրաւ էին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Հայ Աւետարանական եւ Հայ Առաքելական Եկեղեցիներուն նուիրուած քննարկումները: Ցղացք-հասկացութենական* (conceptual) *առումով շահեկան էին հայրենասիրութեան, պատմագրական մեկնաբանութեան, ճարտարապետական վերլուծութեամբ մեկնաբանուած զեկոյցները: Կարեւոր նորութիւն էր տնտեսական բնագաւառին եւ հոգեբանութեան ելակէտէն մեկնած նիւթերուն ընդգրկումը. ասոնք կենսական այլ երեսակներ աւելցուցին գիտաժողովին եւ զայն դարձուցին առաւել ընդգրկուն: Եւ անշուշտ ընդգծելի էին հայութեան եռամիասնութեան՝ Հայաստան-Արցախ-Սփիւռք կառոյցներու կառավարման-ներկայացուցչականութեան եւ փոխգործակցութեան նուիրուած տեսլական եւ քննական զեկոյցները: Աննախընթաց գիտաժողով մը եղաւ այս մէկը, ուր շեշտը դրուած էր հայութեան վերջին 120-ամեայ իրականութեանց, նորագոյն այս փուլի խնդիրներու քննարկման եւ դէպի ապագայ նայելու հրամայականին, ելակէտ ունենալով պետականութեան փաստը: Գիտաժողովի ընթացքին նկատելի դարձան Հայաստան-Սփիւռք թիւրիմացութիւններու առկայութեան նուազումը, երիտասարդ սերունդ եւ աւանդական մօտեցումներ բախումը, բայց մանաւանդ հայ իրականութեան վարումի, ապագայի ծրագրաւորումի խնդիրներուն հրատապութեան գգացողութիւն-գիտակցութիւնը եւ լուծումներու անհրաժեշտութիւնը:*

*Գիտաժողովին ընթացքին յառաջացաւ ջերմ, ազատ, անմիջական միջավայր մը: Նորատեսակ այս հարթակին նախանձախնդիր, երկար քննարկումներուն եւ վերլուծումներուն, միտքերու բախումին, որոնումներուն, յղկումին, բիւրեղացումին մասնակցեցան գիտաժողովին ներկայ եղած հիւրեր, երիտասարդներ, որով գիտաժողովին բարձրաձայնուած խնդիրները հանրայնացուեցան եւ քայլ մը եւս առնուեցաւ հանրութիւնը առաւել մասնակից դարձնելու նման հրատապ հարցերու արծարծման: Տեղին է նշել, որ գիտաժողովին առաջին փուլը տեղի ունեցած էր 29-30 Յունիս 2022-ին, ՀՊՄՀ-ի մէջ: Այս երկրորդ գիտաժողովը որոշակիօրէն յստակ դարձուց հայ իրականութեան ընելիքներուն ծիրը եւ խթան կը հանդիսանայ, որ շարքին երրորդը աւելի նպատակաուղղուած յառաջադրանքներով կիրառելիութեան գործիքակազմեր եւ գործընթացներ առաջարկէ յօգուտ հայ իրականութեան աւելի բարենպաստ ապագայի:*

## «Ո՞վ Չի Սիրեր Պէյրութը»

Շարունակուած էջ 13-էն

*տադրող դրսեւորումի մէջ: Գործնական եւ աշխատանք արտադրող սէրը կը շինէ: Աստուածաշունչի բացատրութեամբ, «սէրը երկայնամիտ է»: Այսինքն երկար ժամկէտի վրայ կը տոկայ, կը շարունակուի, բայց ոչ երբեք՝ աննպատակ: Այլ կը փոխէ եւ նորը կը շինէ:*

*Պօղոս առաքեալն է հեղինակը այս հատուածին: Ան կը գրէ Կորնթոս քաղաքի եկեղեցիին:*

*Պօղոս առաքեալի օրերուն Կորնթոս քաղաքը վաճառականական եւ տնտեսական շատ կարեւոր կեդրոն էր: Այդ օրերուն քաղաքը մխրճուած էր անբարոյականութեան ու ընկերաքաղաքական բազմաթիւ տագնապներու եւ հարցերու մէջ: Այս իրավիճակներուն մէջ եկեղեցին կը տագնապէր, որովհետեւ չէր կրնար ինքզինք գտնել եւ ամրապնդել նմանօրինակ վիճակներու մէջ, ինչ որ պառակտում յառաջացուցած էր եկեղեցւոյ մէջ:*

*Ահա այս իրավիճակին մէջ է, որ Պօղոս առաքեալ կը գրէ Կորնթոսի եկեղեցիի հաւատացեալներուն եւ կը յորդորէ իրենց մշակել «երկայնամիտ սէր»՝ իբրեւ աշխատանքային մշակոյթ: Այն երկայնամիտ սէրը, որ եթէ մէկ կողմէ կը համբերէ, բայց միւս կողմէ՝ նաեւ կը փոխէ եւ կը շինէ:*

*Պատմութիւնն է դարձեալ, որ ինքզինք կը կրկնէ: Այս կրկնուող պատմութեան ընդմէջէն պէտք է տեսնել, թէ Պօղոս առաքեալին յորդորը որքա՜ն կը դառնայ այժմէական եւ կիրարկելի նաեւ այսօր: «Երկայնամիտ սէր»-ը այսօր նոյնքան իրական եւ տիրական անհրաժեշտութիւն է: Այս այն սէրն է, որ կը տոկայ եւ կը շինէ նորը:*

*Եթէ Պէյրութը, իմա՝ Լիբանանը, կը սիրենք, այս կը նշանակէ, որ լիբանանցին իր սէրը պէտք է վերածէ փոխելու եւ շինելու գործընթացի՝ քաղաքական ղեկավարութենէն սկսեալ մինչեւ իւրաքանչիւր քաղաքացի: Երկրին ու հայրենիքին նկատմամբ սէրը ունի պարտականութեան եւ պատասխանատուութեան նշանակութիւն: Սէր մըն է, որ պէտք է փոխէ եւ նորը շինէ: «Ո՞վ չի սիրեր Պէյրութը»:*

*Երեւի չսիրող չկայ: Ալին կը սիրէ, եւ տակաւին, ես ու բոլորս կը սիրենք:*

*Այսօր անհրաժեշտ է, որ Պէյրութի, իմա Լիբանանի նկատմամբ մեր սէրը վերածենք երկայնամիտ սիրոյ: Այն սէրը, որ կը տոկայ, կը շարունակուի եւ կը փոխէ ու կ՚արտադրէ:*

*Կ՚արտադրէ նորը:*

*«Ո՞վ չի սիրեր Պէյրութը»:*

*Ալին եւ անպայմանօրէն՝ բոլորս: Բոլո՛ր լիբանանցիները: Բայց պէտք է սիրել այն սէրը, որ պիտի փոխէ եւ նոր Պէյրութը պիտիստեղծէ:*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 125,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ---------------------------------------------
**Address:** ---------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** -------------
**Tel:**-----------------------
**Email:** ------------------------

## Մ-21 Եւրօ-2023. Անգլիան Յաղթեց Սպանիային Եւ Նուաճեց Տիտղոսը




Անգլիոյ հաւաքականը նուաճեց ֆութպոլի Եւրոպայի մինչեւ 21 տարեկաններու ախոյեանի տիտղոսը: «Պաթումի Արենայի» մէջ տեղի ունեցած եզրափակիչին անգլիացիները 1:0 արդիւնքով պարտութեան մատնեցին Սպանիոյ հաւաքականին:

Կիսաեզրափակիչին Անգլիոյ հաւաքականը 3:0 արդիւնքով յաղթեց Իսրայէլի խումբին: Սպանիոյ հաւաքականը 5:1 արդիւնքով պարտութեան մատնած էր Ուքրանիոյ խումբին:

Անգլիան երրորդ անգամ նուաճեց Եւրոպայի ախոյեանի տիտղոսը այս տարիքային խումբին մէջ: Սպանիան 5 անգամ նուաճած է ախոյեանի տիտղոսը:

## «Ինթերի» Դարպասապահը Այս Շաբաթ Կը Տեղափոխուի «Մանչըսթըր Եունայթըտ»



Իտալիոյ գաւաթակիր եւ սուփերգաւաթակիր «Ինթերի» 27 տարեկան քամերունցի դարպասապահ Անտրէ Օնանան այս շաբաթ կը տեղափոխուի անգլիական «Մանչըսթըր Եունայթըտ»:

Մանչըսթըրեան ակումբը կ՚ուզէ, որ Օնանան հոլանտացի Էրիկ Տեն Հագի գլխաւորած խումբին հետ յաջորդ շաբաթ մեկնի ԱՄՆ:

Աւարտած մրցաշրջանին Օնանան «Ինթերի» հետ մասնակցած է 41 հանդիպման, թոյլ տուած է 36 գոլ, 19 խաղի ընթացքին դարպասը պահած է անառիկ:

## «Ռեալը» Չի Բանակցիր Մփապէի Հետ

Մատրիտի «Ռեալը» կը հերքէ լուրերը, թէ այժմ կը բանակցի Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի 24-ամեայ յարձակող Կիլիան Մփապէի կամ փարիզեան ակումբի հետ, կը հաղորդէ սպանական Marca-ն:

Ընթացիկ իրավիճակը ձեռնտու է Արքայական ակումբին, քանի որ ՊՍԺ-ի եւ Մփապէի նկատմամբ ճնշումը կ՚իջեցնէ անոր փոխադրման գինը: Այժմ անոր փոխադրման արժէքը կը գնահատուի 180 միլիոն եւրօ:

Այս փուլին «Ռեալը» ստիպուած կ՚ըլլար փոխադրման գինի եւ մի քանի տարուայ աշխատավարձի հաշուարկով Մփապէի փոխադրման յատկացնել 400 միլիոն եւրօ, ինչը ահռելի տնտեսական բեռ կը դառնայ ակումբին համար:

«Ռեալը» յոյս ունի, որ Մփապէն եւս մէկ մրցաշրջան կ՚ըլլայ ՊՍԺ-ի խումբին մէջ եւ յաջորդ ամրան անվճար կը տեղափոխուի Մատրիտ: ՊՍԺ-ի ղեկավարութիւնը վերջնագիր ներկայացուցած էր Մփապէին՝ պահանջելով կամ երկարաձգել պայմանագիրը մինչեւ 2025թ. Յունիս, կամ այս ամիս գտնել նոր ակումբ:

Աւարտած ակումբային մրցաշրջանին Մբապէն մասնակցած է 43 հանդիպման, նշանակած՝ 41 կոլ, կատարած է 10 կոլային փոխանցում:

## Փուլիշիչը Ասպարէզը Կը Շարունակէ «Միլանի» Հետ




Լոնտոնի «Չելսիի» 24-ամեայ ամերիկացի կիսապաշտպան Քրիստիան Փուլիշիչը ասպարէզը կը շարունակէ իտալական «Միլանի» հետ: Կողմերը անձնական պայմանագիրի վերաբերեալ համաձայնութեան եկած են մի քանի շաբաթ առաջ, քանի որ Փուլիշիչը ուզած է տեղափոխուիլ «Միլան»:

2019 թուականին «Չելսին» Փուլիշիչի համար Տորթմունտի «Պորուսիային» վճարած էր 60 միլիոն եւրօ:

Ընթացիկ մրցաշրջանին Փուլի-շիչը «Չելսիի» հետ բոլոր մրցաշարերուն մասնակցած է 30 հանդիպման, նշանակած է 1 կոլ, կատարած է 2 կոլային փոխանցում:

## Էմմա Պօղոսեանը՝ Շանրամարտի Եւրոպայի Մ-17 Կրկնակի Ախոյեան




Մոլտովայի մայրաքաղաք Քիշնեւի մէջ կատարուող ծանրամարտի Եւրոպայի մինչեւ 17 տարեկաններու առաջնութեան Հայաստանի ներկայացուցիչ Էմմա Պօղոսեանը երկամարտի 225 քկ արդիւնքով նուաճեց ոսկէ մետալ՝ հռչակուելով Եւրոպայի պատանեկան առաջնութեան կրկնակի ախոյեան:

81 քկ ծանրութեան մէջ Էմմա Պօղոսեանը պոկում վարժութեան բարձրացուց 96 քկ՝ նուաճելով այս վարժութեան փոքր արծաթէ մետալը: Հրում վարժութեան 16-ամեայ ծանրորդը գլխավերեւը պահեց 129 քկ եւ արժանացաւ այս վարժութեան փոքր ոսկէ մետալին: Էմմա Պօղոսեանը հրում վարժութեան սահմանեց նաեւ Եւրոպայի մինչեւ 17 տարեկաններու մրցանակ:

## Մ-17 ԵԱ. Վալերիկ Մովսիսեանը՝ Երկամարտի Ոսկէ Մետալակիր




Վալերիկ Մովսիսեանը երկամարտի ոսկէ մետալ նուաճեց Մոլդովայի մայրաքաղաք Քիշնեւի մէջ կատարուող մինչեւ 17 տարեկաններու մրցումին:

Տղամարդկանց 89 քկ ծանրութեան մէջ Հայաստանի ներկայացուցիչը 305 քկ արդիւնք ապահովեց: Վալերիկ Մովսիսեանը պոկած է 145 քկ, հրած՝ 160 քկ: Ան նաեւ արժանացած է երկու վարժութիւններու փոքր ոսկի մետալներու:

Մ-17 ԵԱ-ում Հայաստանը արդէն նուաճած է 8 մետալ: Ժորա Գրիգորեանը (61 քկ), Սերիոժա Բարսեղեանը (67 քկ) եւ Աննա Ամրոյեանը (76 քկ) նուաճած են ոսկէ, Յովհաննէս Ղահրամանեանը (81 քկ)՝ արծաթէ, Կառլէն Դաւթեանը (49 քկ), Իւղաբեր Ամրոյեանը (40 քկ) եւ Ալինա Սուքիասեանը (71քկ)՝ պրոնզէ մետալներ:

## Դէ Խեան Հեռացաւ «Մանչըսթըր Եունայթըտէն»

Սպանիոյ հաւաքականի դարպասապահ Տաւիտ Տէ Խեան ազատ գործակալի կարգավիճակի մէջ հեռացաւ «Մանչըսթըր Եունայթըտէն»: 32-ամեայ ֆութպոլիստը անգլիական ակումբին մէջ մնաց 12 տարի:

«Կը ցանկամ շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն յայտնել վերջին 12 տարիներու սիրոյ համար: Մենք շատ նուաճումներու հասած ենք այն պահէն, երբ Ալեքս Ֆերկիւսոնը բերաւ ինձ այս ակումբը: Ամէն անգամ երբ այս խումբի խաղաշապիկը հագած եմ, ես զգացած եմ անհաւանական հպարտութիւն: Աշխարհի մեծագոյն ակումբը ներկայացնելը մեծ պատիւ էր, որուն կ՚արժանան միայն քանի մը յաջողակներ:

Այս անմոռանալի եւ յաջող փուլ էր իմ ասպարէզիս մէջ»,- ընկերային ցանցերու վրայ գրած է Տէ Խեան:

## Միացեալ Նահանգները Հասաւ «Ոսկի Գնդակի» Կիսաւարտականին




Հիւսիսային եւ կեդրոնական Ամերիկներու եւ Քարիպեան կղզիներու երկիրները ընդգրկող «Ոսկի Գնդակ» մրցաշարքի քառորդ եզրափակիչին Միացեալ Նահանգներու հաւաքականը յաղթելով Գանատային հասաւ կիսաեզրափակիչ:

Խաղի հիմնական եւ երկարաձգուած ժամանակի աւարտին խումբերը դուրս եկան 2:2 հաւասար արդիւնքով: 11 մեթրանոց փնալթիի հարուածներով Միացեալ Նահանգներ հասան յաղթնակի:

Կիսափզրափակիչ խաղին ԱՄՆ պիտի մրցի Փանամայի դէմ, իսկ Մեքսիքօ՝ Ճամայքայի հետ::